

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան երկ ընդունեց Հայաստանի մէջ Ռուսիոյ դեսպան Անատոլի Տրիտսկովը: Դեսպանը նախագահ Քոչարեանին յանձնեց ռուս-վրացական սահմանին վրայ ստեղծուած իրավիճակին վերաբերեալ ԵԱՀԿի անդամ երկիրներու ուղղուած Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինի նամակը:

Քոչարեան եւ Տրիտսկով քննարկեցին հայեւրոսական յարաբերութիւններուն վերաբերող բազմաթիւ հարցեր:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ԅՂԱԾ ԻՐ ՆԱՄԱԿԻՆ ՍԵՁ

ՊՈՒՇ ԿԸ ԳՈՎԱԲԱՆԵ ԼԻԲԱՆԱՆԸ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ ՍԵՁ ՊԷՅՐՈՒԹԻ ԱՆՎԵՐԱՊԱՀ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երկ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշէն ստացաւ նամակ մը, ուր ան շնորհակալութիւն կը յայտնէ Լիբանանի նախագահին ու ժողովուրդին, աշխարհը ահաբեկչութենէն ձերբազատելու նպատակով շղթայակերծած արշաւին անոնց թանկարժէք եւ անսահման մասնակցութեան համար:

Պուշ իր նամակին մէջ կը յիշեցնէ, որ Միացեալ Նահանգներ 11 Սեպտեմբեր 2001ին ենթարկուեցան յարձակումներու, որոնց նպատակն էր ականահարել բոլոր ժողովուրդներուն խաղաղ, ապտ եւ բարգաւաճ ապրելու հնարաւորութիւն ընձեռող ստիւթները, «բայց ահաբեկչութեան վերջ դնելու մեր քաջ ու վճռական ճիշդութեան մէկտեղումը պիտի իրականացնէ այդ նպատակները»:

Միացեալ Նահանգներու նախագահը իր նամակին մէջ կը հաստատէ, որ «Լիբանանի

որոշումը՝ անվերապահօրէն Կորովիզ կանգնելու հանդուրժողութեան եւ հասկացողութեան արժէքները պաշտպանելու մեր ճիշդութեան, կը նշանակէ, թէ պիտի կարենանք միասին աշխարհի կերտելու համար աշխարհ մը, որ յարգէ ժողովուրդները եւ անոնց կը շնորհէ ապաստանութեամբ եւ յոյսերով յի ապագայ մը»:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ երկ հետեւեցաւ եւ տեղեկութիւններ ստացաւ Ռուսիայի ակին ջուրերէն հարաւային գիւղերու ըմպելի ջուր հայթայթելու ծրագրին անհնարութեամբ խաղաղ, ապտ եւ բարգաւաճ ապրելու հնարաւորութիւն ընձեռող ստիւթները, «բայց ահաբեկչութեան վերջ դնելու մեր քաջ ու վճռական ճիշդութեան մէկտեղումը պիտի իրականացնէ այդ նպատակները»:

Միացեալ Նահանգներու նախագահը իր նամակին մէջ կը հաստատէ, որ «Լիբանանի

միջազգային կողմերուն ներկայացուցած են Լիբանանի յստակ կեցուածքը, թէ վճռած են վերատիրանալ Ռուսիայի ակին ջուրերուն նշանակութեան, մասնաւորապէս որ այդ իրաւունքներու օրինակաւորութիւնը կը հաստատեն միջազգային օրէնքներն ու համաձայնագիրները:

Նախագահ Լահուտ երկ նաեւ հետեւեցաւ Նիւ Եորքի մէջ արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտի ՄԱԿի Ընդհանուր Ժողովին մասնակցող պատուիրակութիւններու հետ ունեցած հաղորդակցութիւններու արդիւնքներուն: Հաղորդութեամբ, որ այդ կողմերը Կորովիզի յայտնած են Լիբանանի արդար պահանջին:

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐԸ ԴԺԳՈՒՅ Ե ԾՈՐՃ ՊՈՒՇԻ ԾԱՌԵՆ

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշէն ՄԱԿի մէջ արտասանած խօսքին թեր ու դէմ տեսակէտներ արձանագրուեցան երկ շխարհի տարածքին:

Առաջին հակադարձողը եղաւ Իրաք, որ «Սուտեր եւ խեղաթիւրումներ» որակեց Պուշէնի ամբաստանութիւնները իրեն հանդէպ: Փոքր վարչապետ Թարէք Ազիզ Պաղատի մէջ կատարած մամուլի ասուլիսի մը ընթացքին ըսաւ, որ պարբերութիւն առ պարբերութիւն պիտի կարգայ Պուշէն ճառը՝ մէկ առ մէկ նշելով սուտերն ու շինծու ամբաստանութիւնները: Իսկ արտաքին գործոց նախարար Նաթի Սապրի ըսաւ, որ Պուշէն ճառը «հակաիրաքեան քարոզչութիւն» է: Ազիզ ըսաւ նաեւ, որ մանրամասնութեամբ կարգալէ ետք Պուշէն խօսքը մամուլի ասուլիս մը պիտի տայ աւելի ուշ, որպէսզի կէտ առ կէտ պատասխանէ Պուշէնի ամբաստանութիւններուն: Ան աւելցուց, որ այդ հանդիպումին պիտի հրաւիրուին արաբական ու օտար լրատու գործակալութիւններու ներկայացուցիչները:

Սապրի իր կարգին անտեսեց Պուշէնի ամբաստանութիւնները՝ դիտել տալով, որ տասներկու տարիէ ի վեր ամերիկեան իշխանութիւնները նոյն ամբաստանութիւնները կ'ուղղեն առանց կարենալ զանոնք հաստատելու:

Սապրի ըսաւ նաեւ, որ Պուշ կը ստէ երբ կ'ըսէ, թէ Իրաք հաւաքական քանդուածի գէնքերու պատրաստութեան ձեռնարկած է՝ սպառնալով ամբողջ շրջանին եւ աշխարհին: Ան աւելցուց, որ Ուաշինկթըն կը փորձէ գտնել որեւէ պատուաւ հաստատ պահելու համար Իրաքի դէմ պատժամիջոցները:

Նել անոր ետին գտնուող քաղաքական դրոյսատեսները: Սուրիացի մեկնաբան մը ըսաւ, որ Պուշ իր ճառով պարզապէս կ'ուզէ ՄԱԿի հովանիին տակ դնել Իրաքի դէմ յարձակումը, որ անխուսափելի է: Սուրիական պաշտօնական մամուլը գարմանք յայտնեց, որ Պուշ թիրախ դարձուցած է Իրաքը՝ մոռնալով ու անտեսելով միջինարեւելեան տագնապը, որ տասնամեակներէ ի վեր լուծուած կը փնտոէ: «Պասս» կը գրէր, որ Պուշ կը մոռնայ ու կ'անտեսէ Իսրայէլն ու անոր յարձակողական ու ծաւալապաշտ քաղաքականութիւնը, որ կը սպառնայ ամբողջ Միջին Արեւելքին:

Յորդանանեան մամուլը եւս քննադատեց Պուշէնի ճառը՝ դիտել տալով, որ Ուաշինկթընի կեցուածքը փոփոխութիւն չէ կրած եւ Իրաքի վրայ յարձակումը կը մնայ անխուսափելի: Յորդանանացի մեկնաբան մը աւելցուց, որ Պուշ յաջողեցաւ հասնել այնպիսի հանգրուանի մը, ուր Իրաքի դէմ յարձակումը պիտի վայելէ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին օրհնութիւնը: Յորդանանեան այլ օրաթերթ մը կը գրէր, որ Պուշ անգամ մը եւս չյաջողեցաւ Իրաքի դէմ ամբաստանութիւնները հաստատել փաստերով:

Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբ մինակն է, որ փորձեց լաւատեսութեամբ հետեւել Պուշէնի արտասանած ճառին՝ դիտել տալով, որ անիկա տագնապին լուծումը կը վստահ ՄԱԿի: Ան ըսաւ, որ հարցը ՄԱԿի յանձնելով կարելի է յուսալ, որ տագնապը պիտի լուծուի դիւանագիտութեան ճամբով: Մուպարաբ կոչ ուղղեց Իրաքի՝ վերընդունելու գէնքի քննիչները:

ՊՈՒՇ. ՍԱՍՏԱՄ ՊԻՏԻ ԶԵՆԹԱՐԿՈՒԹԻ ՄԱԿԻ

Պուշ, որ յայտարարած էր, թէ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը պէտք է որոշէ Իրաքի դէմ որդեգրուելիք քայլերը, երկ ըսաւ, որ անհաւանական կը նկատէ, որ Սատամ Հիւսէյն ենթարկուի ՄԱԿի պահանջներուն եւ պայմաններուն: Պուշ, որ Ապահովութեան Խորհուրդին կը պահանջէ վերջնագիր տալ Իրաքի՝ յարգելու ապագիման պահանջը, ըսաւ, որ Սատամ դժուար թէ ենթարկուի ՄԱԿի պահանջներուն:

Պուշ ըսաւ նաեւ, որ Ապահովութեան Խորհուրդը պէտք է արագ աշխատի ու բանաձեւեր հաստատէ Իրաքի հարցին առնչութեամբ: Ան աւելցուց, որ Ապահովութեան Խորհուրդը յառաջիկայ շարժումն մէջ պէտք է որդեգրէ որոշում մը: Ուաշինկթընի կարգ մը դաշնակիցներ, որոնք

Շար.ը՝ էջ 10

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՆԵՐԽՈՒԹԵՅ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԳԱՂԹԱԿԱՅԱՆՆԵՐ ԿԱԶՄՅԻ ՍԵՁ

Հրասայներու եւ ուղղաթիւներու օժանդակութեամբ իսրայէլեան ուժեր երկ արեւածագէն առաջ պաղեստինեան երկու գաղթականներ ներխուժեցին Կապալի հարաւային շրջանին մէջ, ուր սպաննեցին պաղեստինցի մը: Այլ միջադէպի մը ընթացքին, Կապալի մէջ սպաննուեցան երեք երթաւորներ, երբ պայթում մը տեղի ունեցաւ իրենց բնակարանին մէջ: Պայթումին պատճառը տակաւին չէր յստակացած: Իսրայէլեան բանակը այս շարքուան մէջ երրորդ անգամ ըլլալով Կապալ ներխուժեց՝ իրադարձութիւններու թատերաբեմը Այսրդորանանէն Կապալ տեղափոխելով: Երէկուան գործողութեան ընթացքին, իսրայէլեան ուժերը ձերբակալեցին 19 արմատական պաղեստինցիներ, որոնք ըստ Իսրայէլի՝ «առաքելիչներ» են: Ձերբակալուածներու շարքին էր «Աքալի Նահատակներու Փաղանգներ»ուն պատասխանատուներէն մէկը:

Երէկուան գործողութիւններուն թիրաքարձան «Ռաֆա» եւ «Պրապիլ» գաղթականները: Ականատեսներ յայտնեցին, որ պիւրնորներ քանի մը ժամ մնայլէ ու պաղեստինցիներու հետ բախում ունենայլէ ետք, հեռացան շրջանէն: Ականատեսները աւելցուցին, որ մէկ քոնի կողքին, ինկած են նաեւ եօթը վիրաւորներ եւ աւելի քան քսան բնակարաններ վնասուած են:

Ներխուժումէն քանի մը ժամ առաջ, «Քասսամ-2» հրթիռ մը արձակած էր Կապալի մօտ գտնուող իրէական բնակեցման վայրի մը վրայ: Վիրաւորներ ու վոնէր չարձանագրուեցան: Միւս կողմէ, Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն վերստին յայտարարեց, որ վարչապետեան ալիքին մեղմացումէն առաջ խաղաղութեան բանակցութիւններու պիտի չձեռնարկէ պաղեստինցիներուն հետ: (ՌՈՅԹԸՐԶ)

ՌՈՒՍԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ Կ'ՈՒՋԷ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵՆԷ ԶՐԿԵԼ ՎՐԱՍՏԱՆԸ

ՄՈՍԿՈՒԱ, 13 (ՌՈՅԹԸՐԶ).- Ռուսիոյ խորհրդարանը կ'ուզէ ելեկտրականութեան գրկել Վրաստանը, որ չէ յաջողած կործանել չեչնէ ըմբոստ ուժերուն կեդրոնները: Խորհրդարանին որդեգրած բանաձեւը մարտահրաւէր կ'ուղղէ Ուաշինկթընի, որ կը քննադատէ Վրաստանի մէջ չեչնններու կեդրոններ ռմբակոծելու Մոսկուայի սպառնալիքը:


Ռուսական մամուլին համաձայն, Մոսկուա հաւանութիւն պիտի տայ Իրաքի դէմ ամերիկեան զինուորական գործողութեան, եթէ Ուաշինկթըն կանաչ լոյս տայ Վրաստանի մէջ ըմբոստներուն կեդրոնները ռմբակոծելու: Սակայն Ուաշինկթըն ցարդ կը մերժէ նոյն ահնոցով դիտել չեչնն զինեայներն ու «Քայլիտա»ի հետեւորդները:

Ռուսիոյ խորհրդարանը որոշուեց նախագահ Վլադիմիր Փութինի խիստ ու անգիծող կեցուածքը Վրաստան ապաստանող չեչնն զինեայներուն հանդէպ: Տուժային կողմէ որդեգրուած բանաձեւ մը առաջարկեց պատժամիջոցներ որդեգրել Ռիֆլիսի դէմ: Տուժան պահանջեց, որ Ռուսիա ստանցնէ Վրաստանի արամադրած օժանդակութիւնները, յատկապէս՝ յարմար գիտով ելեկտրականութեան հայթայթումը: Տուժային անդամներ ըսին նաեւ, որ Ռուսիա իրաւունք ունի պատժամիջոցներ որդեգրել այն երկրին դէմ, ուրկէ սպառնալիք կու գայ:

Փութին շինգալթի օր հրապարակած էր յայտարարութիւն մը, ուր կը յայտնէր, թէ Մոսկուա պիտի յարձակի Վրաստան ապաստանած չեչնն ուժերուն վրայ, եթէ Թիֆլիս չկործանէ անոնց կեդրոնները Փանքիսի կիրճին մէջ: Ուաշինկթըն քննադատեց ու անընդունելի նկատեց Փութինի յայտարարութիւնը:

Փութին շինգալթի օր հրապարակած էր յայտարարութիւն մը, ուր կը յայտնէր, թէ Մոսկուա պիտի յարձակի Վրաստան ապաստանած չեչնն ուժերուն վրայ, եթէ Թիֆլիս չկործանէ անոնց կեդրոնները Փանքիսի կիրճին մէջ: Ուաշինկթըն քննադատեց ու անընդունելի նկատեց Փութինի յայտարարութիւնը:

ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՀԱՐՅԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ



Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ կ'ընդունի Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան Գալարար Ս. Յովնանեան

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երկ այցելեց Պապատայի նախագահական պալատ, ուր տեսակցութիւն մը ունեցաւ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի հետ:

Հանդիպումին նախարար Յովնանեան նախագահին զեկուցեց Ինտիանափոլիսի մէջ կայացած պատերազմի աշխարհի ախորժանութեան մրցաշարքին մասին:

Քննարկումի առարկայ դարձան նաեւ Պուրճ Համուտի գետեկերքի եւ ծովեկերքի ապակաման հարցը եւ այս ծիրին մէջ մշակուած ծրագիրները վերատեսութեան ենթարկելու անհրաժեշտութիւնը:

Նախարար Յովնանեան նախագահ Լահուտին խնդրեց հովանաւորել Պուրճ Համուտի քաղաքապետութեան հիմնադրութեան 50ամեակի սոսնակատարութիւնը, որ պիտի կայանայ ընթացիկ տարուան ընթացքին:

Վերջապէս նախարար Յովնանեան նախագահ Լահուտի հետ քննարկեց տեղական եւ շրջանային քաղաքական հարցեր:

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen We Also Provide
- Laboratory services
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՑԱՍՐԱՐՑ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՅՈՐ ԳՐԱՍԵՆԱԿ՝ ԱՅՇԽԼ, ԱՅԵՏԻ ԾԵԼԵ, Բ. ՅԱՐԿ ՇՆՆ. (01) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

ՓԱՂԱՆԳԱՒՈՐՆԵՐՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԵՐԵՍՓՈՒԽԱՆ ՍՈՒԱՅՏԻ

Փաղանգաւոր Կուսակցութեան լրատուական գրասենեակը երէկ խիստ ոճով պատասխանեց երեսփոխան Ֆարէս Սոււայտի կուսակցութեան ղեկավարութեան եւ անոր որդեգրած քաղաքականութեան ուղղուած քննադատութիւններուն: Երեսփոխանը ժիպէյլի մէջ հաւաքի մը ընթացքին արտասանած էր խօսք մը, որ Լիբանանի պատմութեան եւ նահատակներուն հաւատարիմ մնալու եւ երկխօսութեան ու պայքարի հաշտութեան կողքին նաեւ խօսած էր կուսակցութեան ներքին հարցերու մասին:

Լրատուական գրասենեակը հաղորդագրութեամբ մը յիշեցուց, որ երեսփոխան Սուայտ կուսակցութեան կատարած է Փարիզի մայրաքաղաք վրայ այն պահուն, երբ Լիբանանի հողին վրայ անօրինակ նահատակներ ինկած են: Ան նաեւ յիշեցուց, որ երեսփոխանը իր ընտրաշրջանէն ներս իր դաշնակիցներուն դէմ դարձած է առաջին պատեհ առիթին:

«Երեսփոխանը կը յոխորտար, թէ ի՛նչ առաջին անգամ արժարժած է պայքարի երկխօսութեան նիւթը, հիմնական դեր ունեցած է մարտի - տիրույթի հաշտութեան մէջ եւ Սուլթանիայի մէջ տեսած է փաղանգաւորներու եւ Լիբանանեան Ուժերու դրօշները: Սուայտ կը մոռնայ, թէ տարիներով ուշացած է հաշտութեան առաջին քայլերէն, երբ փաղանգաւորները Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան հետ գումարած են «տունդարձի խորհրդածողովը», որ հաշտութեան նախաքայլն էր, իսկ անոր գազաթնակետը՝ մարտիներու Սֆէյր պատրիարքին Լեռնալիբանան այցելութիւնն էր», նշեց հաղորդագրութիւնը:

«Երեսփոխանը, Փաղանգաւոր Կուսակցութեան ներքին գործերուն միջամտելով՝ խօսեցաւ ճակատամարտի մը մասին, որ արգիլեց նախկին նախագահ Ամին ժեմալի կուսակցութեան ղեկավար դառնալէ՝ պաշտպանելով քաղաքական դիրքին ժառանգականութեան մօտեցումը, զոր տարիներ առաջ շրջանցած են փաղանգաւորները», ըսաւ հաղորդագրութիւնը՝ դիտել տալով, որ Սուայտ ժառանգաբար հասած է խորհրդարան եւ կը մոռնայ, թէ այս մօտեցումը հակաժողովրդավարական է:

ՔՐՐՆԵԹ ՇԱՇՈՒԱՆԻ ԸԱՆԴԻՊՈՒՄԸ ԿՐ ՊԱՇՏԱՆՔԷ ՅԱՐԳԵԼ Կ. ՍԵՐԻ ԵՐԵՍՓՈՒԽԱՆԱԿԱՆ ԱՆՁԵՌՆԱԽԵԼԻՈՒԹԻՒՆԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորի երէկ ընդունեց Քրրնէթ Շահուանի Հանդիպումէն պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին երեսփոխաններ Նայիլա Մուաուատ, Մանսուր Ղանէմ Պոն, Ֆարէս Սուայտ, Փիեռ ժեմալէ, Անուան Ղանէմ, Սալահ Հընէյն եւ Կապրիէլ Մըր: Պատուիրակութիւնը արժարժեց «Ը.մ. Թ.ի. վի.» պատկերասփիւռի կայանին շէնքին եւ երեսփոխան Կապրիէլ Մըրի գրասենեակին շուրջ ապահովութեան ուժերուն որդեգրած միջոցառումներուն հարցը:

Տեսակցութենէն ետք երեսփոխան Նայիլա Մուաուատ յայտարարեց, որ երեսփոխանական անձեռնմխելիութիւնը չի յարգուիր: «Մենք կ'ուզենք յարգել եւ պահպանել դատական, օրէնսդրական եւ օրինական կանոնները, իսկ այս բոլորին ծիրէն ներս հիմնական նշանակութիւն ունի երեսփոխանին անձեռնմխելիութիւնը գործելու հնարաւորութիւնը», ըսաւ ան եւ ընդգծեց, որ այս առնչութեամբ Պրորիի խոստացած սրբազրութիւնները ցարդ չեն կատարուած:

Մուաուատ ըսաւ, որ տեսակցութեան ընթացքին նաեւ արժարժուած են քաղաքական ընդհանուր հարցերը, եւ այս ծիրէն ներս ընդգծած են, որ բոլոր կողմերը կ'ուզեն բարելաւել ներքին բեմին տիրող մթնոլորտը, անոր ներքին միակամութիւնն ու յօրակցութիւնը՝ միաժամանակ հրաժարելով ամբաստանութիւններ եւ մանաւանդ դաւաճանութեան ամբաստանութիւններ ուղղելէ:

«Ճիշդ չէ այն ամբաստանութիւնը, թէ Քրրնէթ Շահուանի Հանդիպումը դատական բնոյթով հարցեր կը շահագործէ քաղաքական նպատակներու համար եւ կամ քաղաքական գունաւորում կու տայ անոնց»,

ըսաւ Մուաուատ՝ յիշեցնելով, որ ինչպիսի մեծ թիւով եւ ինչ մակարդակի անձնաւորութիւններ մասնակցած են մամլոյ սենտի-

քայի կեդրոնատեղիին մէջ կայացած պատուիրակներու պաշտպանութեան հաւաքածոյն:

Շարք՝ էջ 10

ՖՐԱՆՍԱՅԻ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՊԸՐՐԻԻ

Ֆրանսական Ծերակոյտի պատուիրակութիւնը երէկ, ձերբակուտական Ատրիան Կոթէրոնի գլխաւորութեամբ, Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթիէի հետ այցելեց Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորիի, երեսփոխան Սիշէլ Մըրի եւ շիւռ սիւննի համայնքապետներուն:

Կոթէրոն յայտարարեց, որ Պրորի ներկայացուցած է Լիբանանի կեցուածքները ներքին եւ շրջանային հարցերուն առնչութեամբ, նաեւ ներկայացուցած է հարաւի ջուրի հարցը, Լիբանանի օրինական իրաւունքները եւ այս մասին խորայնեան մտահոգիչ սպառնալիքները: «Մեծ յոյս ունինք, որ Ֆրանսայի սպառնալիքները կ'ազդակերպուին գերաստիճան ժողովրդի պիտի գումարուի ճշդուած թուականին Պէյրութի մէջ», ըսաւ ան:

Շարք՝ էջ 10

ԼԻԲԱՆԱՆՅԻ ԳԵՐԻՆԵՐՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒ ՑՈՅՑ

Իսրայիլեան բանտերու մէջ արգելափակուած իբրանացի գերիներու ընտանեկան պարագաներ երէկ կատարեցին ցոյց մը Սալայի, Սուրի եւ Ալէյի մէջ եւ կոչ ուղղեցին, որ կապուի յանձնախումբ մը՝ հետապնդելու իբրանացի գերիներու հարցը: Ցուցարարներուն միացած էր նաեւ Մարդկային Իրաւանց Լիբանանեան Միութեան ընդհանուր քարտուղար Նամմէ Ժումաս՝ պահանջելու համար օրէնքի Նամմէ Ժումաս՝ պահանջելու համար օրէնքի թիւ 364 յօդուածին գործադրութիւնը, որ կ'առաջարկէ նիւթական յատկացումներ եւ ընկերային օժանդակութիւններ կատարել:

Ցուցարարները դատապարտեցին էլեւմուտքի նախարարութիւնը, որ կը յայտարարէ իրենց շնորհելու խոստացումներ նիւթական յատկացումներ:

ՈՒՍՈՒՅԻՉԻ ԿԱՐԻՔ

Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճը կարիք ունի ֆրանսերէնով մաթեմաթիկ կիսամյակ ուսուցիչ: Դիմելու համար կը խնդրուի դիմել տնօրէնութեան:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՏՈՒ ԽԱՉԿԵՐԱՅ ԵՒ ՄԱՏԱՂՈՐԸՆԵՔ

ՉԱԼՔԱՅԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՒ ՏՈՒՆ ԼՈՒԹՈՎ

ԱՄԵՆ. ԵՒ ԳԵՐՁ. ՏԵՐ ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.

Կաթողիկոս - Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Ըայոց Ըայրապետական Սուրբ պատարագ պիտի մատուցուի եւ աւուր պատշաճ քարոզ Կիրակի, 15 Սեպտեմբեր 2002, առաւօտեան ժամը 10:30ին:

ԵՆՆՕԹ. Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր 2002, Օր Սեպտեմբ. Ս. պատարագ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 8:00ին:

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ ԵՒ ԽԱՉՎԵՐԱՅԻ ՏՈՒՆ ԼՈՒԹՈՎ

Կիրակի, 15 Սեպտեմբեր 2002ին, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ համընդհանուր Ս. պատարագ պիտի մատուցուի: Պիտի պատարագ եւ քարոզէ՝

ԳԵՐՁ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

(Առաջնորդ Լիբանանի Ըայոց թեմին) Սկիզբ ժամերգութեան ժամը 8:00ին Ս. պատարագ ժամը 9:30ին Զարոզ ժամը 11:00ին Մատաղօրհնէք ժամը 12:00ին

Ս. պատարագի աւարտին Յուշարձան համալիրի առջեւ հոգեհանգստեան արարողութիւն եւ մատաղօրհնէք պիտի կատարուի հերոսամարտի ինկած նահատակներու հոգիներուն համար: Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի ժողովուրդի գաւակները մասնակցելու մեր ազգն ու հաւատքը պանծացնող այս տօնակատարութեան:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՊՕՂՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ուատատ Յարութիւնեան եւ դստերը՝ Վերոնիք, Անի եւ Ռիթա Տէր եւ տիկին Կարօ Յարութիւնեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Սարգիս Յարութիւնեան Տէր եւ տիկին Ճորճ Հաննա Տէր եւ տիկին Պեռնար Պզգիկեան Տէր եւ տիկին Մարուան Հապիպ եւ զաւակունք Յարութիւնեան ընտանիք ժապարակ ընտանիք Կարապետեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր, հօրեղբոր եւ հարազատին՝

ԱԻՏԻՍ ՍԻԶԱՅԸ ԶԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 13 Սեպտեմբեր 2002ին, ինքնաշարժի արկածի պատճառով: Յուղարկուածութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Շաբաթ, 14 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Սիւի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, ուր կ'ենթադրուին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը: ●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ: ●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Արագած, Համապայլունի շէնք, 7րդ յարկ:

ՄԱՀԱԶԴ

ՀԱԼԷՊ ՀԱԼԷՊ Տիար Կարապետ Չամիչեան Տէր եւ տիկին Յարութիւն եւ Դայար Չամիչեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Բաֆֆի եւ Մարիա Աւետիսեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Վիգէն եւ Վանիա Պապիկեան եւ զաւակունք Արթ. Տ. Մեքրոպ քհնյ. Թաշճեան եւ երէցիկին Գարմէն եւ զաւակունք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր եւ հարազատին՝

ՎԵՇԱՆՈՒԾ (ԱԼԻՍ) ՉԱՄԻՉԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 11 Սեպտեմբեր 2002ին: Յուղարկուածութեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 12 Սեպտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Վրլա-ներ - Հայկա: ●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ: ●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Հինգշաբթի 12, Ուրբաթ 13, Շաբաթ 14 եւ Կիրակի 15 Սեպտեմբերին:

ՄԱԹԻՏԱ ՊԱՍՄԱՃԵԱՆ

ընդ ԱՐԱ ՌՈՒԲԻՆԵԱՆ ՆՇԱՆՈՒՄԾ Ուրբաթ, 13 Սեպտեմբեր 2002, Պէյրութ

ԵԱԽՈՒ ՅԱՐԿԱՔԱԺԻՆ

●Թրատ, Մար Եուսէֆ եկեղեցւոյ տես, 1 ճնշասենեակ, խոհանոց եւ բաղնիք: Դիմել՝ հեռ. 01-497082:

ՎԱՐՉՈՒ ՏՈՒՆ ԵՒ ԽԱՆՈՒԹ

●Պուրճ Համուտի մէջ: Դիմել՝ հեռ. 03-705881:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

●ՆԱԽԱԳԱՀ Լաիուս երէկ ընդունեց այցելութիւնը Թրիփոլիի եւ Քուրայի յոյն ուղղափառ առաջնորդ Էլիաս Քըրպէն Եպիսկոպոսին, որ շնորհակալութիւն յայտնեց նախագահին իրեն շնորհուած շքանշանին համար, ինչպէս նաեւ Ազգային Արխիւներու Հիմնարկի մէկ պատուիրակութիւնը, որ նախագահ Լաիուսի ներկայացուց իր մտադրութիւնները գործունէութեան շուրջ տեղեկագիր մը:

●ԵՐԻՏԱՍՍՐԴՈՒԹԵԱՆ եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ ընդունեց լիբանանեան ողիմպիական խորհուրդի նախագահ Վոր. Սուիէյլ խորհուրդին, որուն հետ քննարկեց մարմնակրթութեան մարզին առնչուող ընդհանուր հարցեր եւ պանոսք բարելաւելու պահանջները:

Նախարար Յովնանեան նաեւ ընդունեց վոլիպոլի Լիբանանի ֆետերասիոնի նախագահ Նարի Լաիուսը, փոխ նախագահ Ուալիտ Շըհատէ Քասուֆը եւ ընդհանուր քարտուղար Ուալիտ Եունէլը: Քննարկուեցան մարմնակրթութեան առնչուող հարցեր:

●ՇԻՆԵՐՈՒ Գերագոյն խորհուրդի փոխ նախագահ շէյխ Ապտէլ Էմիր Քապալան երէկ կոչ ուղղեց՝ գումարելու Լիբանանի համայնքապետներու կրօնական խորհրդածողով մը, որ վերջ կը դնէ ներքին հարցերու հրահրումին եւ պայքարի միացեալ կեցուածքներ կը բանաձեւէ: Ան նաեւ կոչ ուղղեց նախագահ Վոր. Էմիլ Լաիուսի, որ շարունակէ հովանաւորել ամէն երկխօսութիւն, որ կ'ամրապնդէ ներքին միասնութիւնը:

Շէյխ Քապալան նաեւ քննադատեց ամերիկեան Քոնկրէսին ներկայացուած Սուրիային հաշի պահանջելու օրինագիծը եւ այս ծրագիրին ծափահարող լիբանանցիները:

ԱՅՆՃԱՐ ԱՅՆՃԱՐ

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 87ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

●Քանդակներու անհատական ցուցահանդէս, արուեստագետ ՎԱՐՈՒԺԱՆ ՄԱՐՏԻՐԵԱՆԻ. հովանաւորութեամբ Ըայրապետի դեսպան ԱՐԵԳ ՅՈՎԿԵԱՆԻՍԵԱՆԻ

●ԵՆՆՕԹ.- Ցուցահանդէսը բաց պիտի մնայ Շաբաթ 14 եւ Կիրակի 15 Սեպտեմբեր 2002, առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ ուշ գիշեր:

●Ժողովրդային տոնախմբութիւն եւ ազգային յեղափոխական երգերու փառատօն, կ'երգեն ԿԻԳԵՆ ՏԻՉՉԵԼԵՆԵԱՆ

ՄԱՆՈՒԿ ՍԻՆԱՍԵԱՆ ՍԻԿԻ ՏԵՍԻՐՃԵԱՆ ԳՕԳՕ ԹԻԹԻԼՃԵԱՆ Մասնակցութեամբ՝ օրկանցիստներ ԲԱՖՖԻ ՏՈՒՆԵՐԵԱՆ ԵՒ ՅՈՎԿԻ ԱՏՈՒՐԵԱՆ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 14 Սեպտեմբեր, երկուշաբթի ժամը 10:00ին, Յուշարձան համալիրի շրջափակէն մերս:

●«Մուսա Լեռ Այնճար» թանգարանի շէնքի հիմնարկէք:

Տեղի կ'ունենայ Կիրակի, 15 Սեպտեմբեր, յաւարտ Ս. պատարագի, Սուսան Լեռան յուշարձանի կողքին, մասնակցութեամբ լիբանանահայ երեք համայնքներու առաջնորդներուն: Հիմնարկէքն կը յաջորդէ աւանդական մատաղօրհնէք:

Ը. Յ. Գ. «ԿԱՐՍԻՐ ԼԵՆ» ԿՈՄԻՏԵ ԴԱՍՏ. ՄԱՐՍԻՆ

ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ ԱՅՆՃԱՐ - ԼԻԲԱՆԱՆ ԿԵՐԱՍՈՒՏ

Տերոջ շնորհքով 2002 - 2003 տարեշրջանը պիտի սկսիք Չորեքշաբթի, 25 Սեպտեմբեր 2002ին: Արձանագրութիւններ տեղի պիտի ունենան հետեւեալ թուականներուն. 17էն 20 Սեպտեմբեր առաւօտեան ժամը 9:00էն 12:00՝ ցերեկօթիկ աշակերտներ: 23էն 24 Սեպտեմբեր առաւօտեան ժամը 9:00էն կտօրէ ետք ժամը 3:00՝ գիշերօթիկ աշակերտներ:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԹԻՉՆՈՅ ԲՈՅՆ ԹԻՉՆՈՅ ԲՈՅՆ

ԽԱՉԻ ԱՂԱՍՏԱՆ ԹԱՓՈՐ

Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել, որ ինչպէս ամեն տարի, այս տարի եւս, Կիրակի, 15 Սեպտեմբեր 2002, երկուշաբթի ժամը 7:00ին, Խաչվերացի տօնին առիթով, տեղի պիտի ունենայ Խաչվերացի Աճղաստան Թափօր, Թաշճոց Բոյնի Ս. Գայիանէ եկեղեցւոյ կից դաշտին մէջ: Արարողութեան իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Դպրեվանքի սարկաւազաց դասը, ուրարակիրներն ու տիրացուները:

Կը հրաւիրենք հայ ժողովուրդի բոլոր գաւակները՝ ներկայ գտնուելու սոյն հոգեպարար արարողութեան՝ հաղորդուելու օրուան խորհուրդով եւ ներշնչուելու Քրիստոսի փրկչական Ս. խաչով:

Արարողութեան ընթացքին տեղի պիտի ունենայ մոմավառութիւն, բոլոր հաւատացեալներուն մասնակցութեամբ:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ ԹՈՂՈՍ ԲՈՅՆԻ

ՃԱՆՉՆԱՆՔ ՀԱՅ ԴՊՐՈՅԸ

ԿՈՉ ՀԱՅ ԾՆՈՂՆԵՐՈՒՄ

Լիբանանահայ կրթական վարժարանները, Լիբանանի տարածքին գործող բոլոր վարժարաններուն նման, կը կիրարկեն պետական կրթական նոր ծրագիրը, իրենց վստահուած աշակերտները կը պատրաստեն պետական քննութիւններուն եւ կ'արձանագրեն յաջողութիւններ եւ յաճախ՝ ոչ հայկական վարժարաններէն աւելի լաւ արդիւնքներ:

Հայկական երկրորդական վարժարաններէն շրջանաւարտներ կը հասնին Լիբանանի մէջ գործող համալսարաններ եւ հոն կ'ուսանին եւ ապա կը վկայուին՝ պատիւ բերելով իրենց ուսում ջանքած հայկական կրթական հաստատութիւններուն եւ լիբանանահայութեան: Այսօր, հայկական հաստատութիւններէն շրջանաւարտներ Լիբանանի մէջ կը գործեն իբրեւ պետական երեսփոխան, բանակի զօրավար, պետական քննիչ, տնօրէն, համալսարանի դասախօս, թմբիչ, երկրաչափ, հեռուստահիլի խօսնակ, արուեստագէտ, տնտեսագէտ, առեւտրական, իրաւաբան, եւ այլն:

Հայ դպրոցը, բարձրորակ ուսման ջանքովին եւ պետական կրթական ծրագրի գործադրութեան կողքին, կը կատարէ հիմնական դեր մը. կը կերտէ իրեն վստահուած մատղաշ հայ նոր սերունդին մէջ հայու տոկուն նկարագիր, կը պարգացնէ հայկական ոգին, անոր կը փոխանցէ մեր պայտերուն արքայան հաւատը, մեր մշակոյթը, մեր ազգային հոգեմտւոր հոյակապ ժառանգութիւնը, հայկական տոհմիկ սովորութիւնները եւ հայութեան պահանջատիրական ոգին: Տունը, ընտանեկան դաստիարակութիւնը եւ ակումբը չեն կրնար տալ այն ինչ, որ հայ դպրոցը կու տայ:

Ձեր պատկերներուն հայ մնալը երաշխաւորուած է հայ դպրոցով: Հայ դպրոցը, հակառակ իր դիմագրաւած տնտեսական դժուարութիւններուն, առաւելագոյն նիւթական օժանդակութիւն կը տրամադրէ իրեն դիմող հայրերին: Կարեւոր է, որ յատուկ է մեզի եւ գրեթէ գոյութիւն չունի ոչ հայկական հաստատութիւններու մէջ:

Հայկական Սփիոթի դժուար պայմաններուն մէջ՝ հայ դպրոցը փարոս մըն է, որուն ճառագայթումը հոգիներէն ներս կը սփռէ հայկականութեան լոյսը եւ կը վանէ ձուլուի մի խաւարը: Հայ դպրոցը կը յղէ ու փայլ կու տայ այն անտաշ թանկագին հոգիներուն,

որոնք իրեն կը վստահուին, մինչեւ որ անոնք շողան եւ իրենց կարգին բարձրացնեն ուրիշները:

Կոչ կ'ուղղենք հայ ծնողներուն, որ անվարան իրենց պատկերը վստահին հայ դպրոցին, կերտելու համար վաղուան ամուր նկարագրի եւ սկզբունքներու տեր ամբողջական մարդն ու հայը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՅԸ ԵՐՈՒՄ ԵՎ ԿՈՉՈՒՄ

ԱՉԳԱՅԻՆ ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ԶԱԿՈՒԲԵԱՆ ՔՈԼԵԾ

Լեւ. 01 / 262618

e-mail: sofiahag@inco.com.lb

ԱՐԿԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան ընկեր 2002 - 2003 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են եւ կը շարունակուին մինչեւ Երեքշաբթի, 25 Սեպտեմբեր, ամէն օր ժամը 9:00էն 1:00, բացի Ծաբաթ օրերէն:

Ընկեր ունի ֆրանսերէն եւ անգլերէն բաժնիներ: ԹԵՔՆԻԿ ԸՍԺՄԱՐՈՒՆԸ

Յառաջիկայ տարեշրջանին, ընկերն ներս կը հաստատուի նաեւ ԹԵՔՆԻԿ բաժանմունք (BT), ուր կրնան յաճախել ինժեներող դասարանը աւարտած աշակերտներ:

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ Վերաքննութիւնները տեղի կ'ունենան հետեւեալ թուականներուն.

Երեքշաբթի, 17 Սեպտեմբեր - Լեւոն: Գործընթացի, 18 Սեպտեմբեր - գիտական ճիւղեր եւ ուսողութիւն:

Հինգշաբթի, 19 Սեպտեմբեր - այլ ճիւղեր: Վերաքննութիւնները կը սկսին առաւօտեան ժամը 8:30ին:

ՎԵՐԱՄԱՌՏՏ ԺՐ. կարգ - Հինգշաբթի, 19 Սեպտեմբեր 2002 Միջնակարգ եւ երկրորդական - Հինգշաբթի, 3 Նոյեմբեր 2002

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԳՈՒՅՑԻՆԻ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ»

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵԾ

ՎԵՐԱՄՈՒՏ

Համազգային «Բարսեղ Կանաչեան» երաժշտական ընկեր 2002-2003 տարեշրջանի արձանագրութիւնները կը սկսին 16 Սեպտեմբերին եւ կը շարունակուին ամէն օր, բացի Ծաբաթ օրերէն, կեսօրէն առաջ ժամը 10:00էն 12:00 եւ կեսօրէն ետք ժամը 3:00էն 7:00: Վերամուտ՝ 14 Նոյեմբեր:

ԾԱՆՕԹ.- Յանգումի մանրամասնութեան համար դիմել երաժշտանոցի քարտուղարութեան. հեռ. 01-265899 եւ 01-249375:

ԴԵՍՊՈՒՆ ԱՐԵՎ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԱՅՆՃԱՐ ԱՅՅԵԼԵՑ

Երէկ, երեկոյեան ժամը 7:00ին Լիբանանի մէջ Հայաստանի Արեւ Յովհաննիսեան առաջին անգամ ըլլալով այցելեց Այնճար, Մուսա Լեւան Հերոսամարտի 87ամեակի երէք օրերու վրայ երկարող հանդիսութիւններուն ներկայ գտնուելու համար:

«Սարգիս Չէյթլեան» Ժողովրդային տան դիմաց դեսպանը դիմաւորուեցաւ Այնճարի Հ. Մ. Ը. Մի փողերախումբին կողմէ եւ ընդունուեցաւ զինդին հոգեւոր պետերուն եւ պատկան մարմիններու ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ մեծ թիւով այնճարցիներու կողմէ: Տեղի ունեցաւ աւանդական աղ ու հացի արարողութիւն: Ժողովրդային տան «Չաւէն Թաշճեան» սրահին մէջ Հ. Մ. Այնճարի «Կարմիր Լեռ» Կոմիտէի կողմէ Կարօ Փամպուրեանի ողջոյնի խօսքէն եւ դեսպանին սրտի խօսքէն ետք, ժամը 7:30ին կեդրոնին մէջ տեղի ունեցաւ լիբանանահայ, բնիկ մուսալեռցի



Դեսպան Ա. Յովհաննիսեան արուեստագէտ Մարտիրեանի հետ ցուցահանդէսից ընթացքից

արուեստագէտ Վարուժան Մարտիրեանի քանդակներու ցուցահանդէսին բացումը Արեւ Յովհաննիսեան ամուլին կողմէ: Նախքան ծափաւէնը կտրելը Հ. Յ. «Կարմիր Լեռ» Կոմիտէի դաստիարակչական յանձնարարութիւն կողմէ խօսք առաւ Եսայի Հասթեան: Ողջունելէ ետք դեսպանը եւ պաշտօնական հիւրերը, ինչպէս նաեւ մեծ թիւով այնճարցիներու կողմէ Կարօ Փամպուրեանի ողջոյնի խօսքէն եւ դեսպանին սրտի խօսքէն ետք, ժամը 7:30ին կեդրոնին մէջ տեղի ունեցաւ լիբանանահայ, բնիկ մուսալեռցի

հանգրուաններուն եւ արուեստին:

Պաշտօնական բացումէն ետք ներկայները ներս հրաւիրուեցան դիտելու Վ. Մարտիրեանի տպարկիչ քանդակներէն փունջ մը:

Ժամը 8:15ին դեսպանը հոգեւոր պետերուն եւ պաշտօնական հիւրերուն ներկայութեան ծաղկեպսակ պետեղեց Ս. Պողոս եկեղեցու կից գտնուող յուշարձանին վրայ, ուր տեղի ունեցաւ հոգեհոսքի արարողութիւնը: Այնուհետեւ ան աւարտեց Մուսա Լեւան Հերոսամարտին ընթացքին նահատակուած հայորդիներուն հոգիներուն համար:

Ապա Ս. Պողոս եկեղեցի այցելելէ ետք, դեսպանը կրկին խօսք առաւ «Գ. Կիւլպէնկեան» սրահ, ուր հանդիպում ունեցաւ Այնճարի ժողովրդի հետ: Հանդիպումին ներկայ էին զինդին հոգեւոր պետերը եւ Այնճարի զուրս ծառայող այնճարցի հոգեւորականները: Այնճարի քաղաքագետ Սեպուհ Սպայեան, Հ. Յ. Կեդրոնական Կոմիտէի անդամներ, գիւղի միութիւններու եւ պատկան մարմիններու անդամներ, դպրոցի տնօրէններ եւ մեծ թիւով այնճարցիներ:

Դաստիարակչական յանձնարարութիւն կողմէ բացման խօսքը կատարեց ճորձ Արեւեան, որ նշեց Այնճարի ժողովրդին Հայաստանի հանդէպ ունեցած յատուկ կապուածութիւնը՝ շէշտելով, որ «Հայաստանի իւրաքանչիւր նուաճում մեր նուաճումն է եւ իւրաքանչիւր ետորք մեր կորուստն է»:

Դեսպան Յովհաննիսեան հաստատեց Հայաստանի եւ Այնճարի միջեւ հարապատ յարաբերութիւններու գոյութիւնը եւ իր յուշումը արտայայտելէ ետք նշեց, թէ Այնճար խորհրդանիշ է վերածնունդի՝ նկատի առած, որ նահատակներու յաջորդ սերունդներն են, որ կ'ապրին հոն: Ան ըսաւ. «Այնճարի ժողովրդը արժանի է, որ համայն հայութիւնը խոնարհի անոր առջեւ, որովհետեւ անոնք պատկաններն են այն մարդոց, որոնք մարտնչեցան եւ գոյատեւեցին»:

Դեսպանը ընդհանուր գիծերու մէջ անդրադարձաւ Հայաստան - Լիբանան միջպետական դիւանագիտական յարաբերութիւններուն, ինչպէս նաեւ՝ Հայաստան - Սփիւռք կապերուն: Իր վերջին տարիներէն ետք դեսպանը ունկնդրեց ներկայներուն ըսելիքներուն եւ սպառիչ պատասխաններ տուաւ անոնց հարցումներուն:

ԱՐԱՄ Ա. ԸՆԴՈՒՆԵՑ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԴԵՍՊՈՒՆԸ

Արամ Ա. երէկ Պիթֆայայի մէջ ընդունեց Լիբանանի մէջ Հունգարիոյ դեսպան Ենիօ Ֆապիլըն: Աւելի քան ժամ մը տեւող հանդիպման ընթացքին արծարծուեցան Լիբանանի այժմու կացութեան կապուած հարցեր: Վերջին պարզացումներու լոյսին տակ քննարկուեցան նաեւ Միջին Արեւելքի կացութիւնը իր պահանջներէն ետք: Դեսպանը լայն տեղեկութիւններ փոխանցեց վեհափառ հայրապետին Հունգարիոյ հայ գաղութի կեանքին մասին: Վեհափառ հայրապետը իր կարգին տեղեկակ պահեց դեսպանը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսական Ս. Աթոռի առաքելութեան բոլոր երեսներուն շուրջ: Ապա ընդառաջելով դեսպան Ֆապիլընի փափաքին, վեհափառ հայրապետը լայն տեղեկութիւններ տուաւ միջեկեղեցական կեանքին, յատկապէս Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ձամբով տարուող աշխատանքներուն մասին:

ԱՉԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈԼԵԾ

2002-2003 ՏԱՐԵՇՐՁԱՆ

Ա.- ԺԱՄԱՆԱԳՅՈՒՆՆԵՐ ՕԳՈՍՏՈՍ ամսուան ընթացքին գրասենեակները բաց են ԵՐԵՎԱՆԻ օրերը, ժամը 8:00էն 12:00:

Երկուշաբթի, 2 Սեպտեմբերն սկսեալ անճանկազմը ամենօրեայ ներկայութիւն է վարժարանէն ներս:

Բ.- ԵՐԱՅԻՄԱՆ ԿՈՄԻՏԵՆ

Վարժարանի ԲՈԼՈՐ աշակերտները ԱՆԽՈՏԻՐ, ինչպէս նաեւ նոր դիմում կատարողները, պետք է արձանագրուած ըլլան՝ ընդունուելու համար դասարան:

ՈՒՆԵ ԱՅՎԵՐՏ ԻՆՔՆԱՐԵՐԱՐԱՐ ԱՐԶԱՆԱԳՐՈՒՄԸ ՉԻ ՆԿԱՏՈՒՐ

1.- Նորեկ աշակերտները պետք է ներկայացնեն անճանապարհի լուսապատճէն, նախկին վարժարանէն փոխանցագիր՝ վաւերացուած կրթական նախարարութենէն, վիճակագրոյց եւ բարի վարուց վկայագիր, առողջական վիճակին մասին վաւերաթուղթ եւ 3 լուսանկար:

2.- ՄԱՆԿԱՄՈՒՐ կ'ընդունուին 2 ամսու - 2 տարեկան 6 ամսու փոքրիկներ:

ԲՈՂՐՈՋ դասարան կ'ընդունուին 2 տարեկան ետք ամսու փոքրիկները:

Գ.- ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր՝ ԼԵՂՈՒՆԵՐ Երեքշաբթի, 17 Սեպտեմբեր՝ ԹՈՒՐԿԱՆՈՒԹԻՒՆ ՌԻՍՈՂՈՒԹԻՒՆ

Գործընթացի, 18 Սեպտեմբեր՝ ԱՅՆ ԵՒ ԹԵՐ ԾԱՆՕԹ.

Ընդունութիւնները կը սկսին ժամը ձիշո 8:00ին:

Գ.- ԳԻՐԵՎ, ԳՐԵՆՍԿԱՆ, ՊԵՏՅՈՅԷ ԵՎ ՀԱՄԱՉԳԵՍԵՎ ՎՍԵՍՈՒՅԸ տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 23էն 30:

Ե.- ՎԵՐԱՄՈՒՏ


1.- Մանկամուտ՝ ԵՐԵՎԱՆԻ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ

2.- ԺՐ. կարգ՝ ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ

3.- Ա. ԺԱ. կարգեր՝ ԳՈՐԵՎԱՐԹԻ, 2 ՆՈՎԵՄԲԵՐ

4.- Մանկապարտէզ՝ ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 7 ՆՈՎԵՄԲԵՐ

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ



ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐՈՒԹԵՐԸ

13 Սեպտեմբերի թիւով լիբանանեան մամուլը գլխաւորաբար անդրադարձած է Լիբանանի քաղաքական ներքին կեանքը յուշող պահանջներու, որոնց կարգին՝ Էշրեֆի մէջ գումարուած Սուրիոյ զօրակցութեան հանդիպումին: Թերթերը նաեւ լուսարձակի տակ առած են ՄԱԿի Ընդհանուր Ժողովին Միացեալ Նահանգներու նախագահ ճորձ Պուշի արտասանած ճառը եւ միջազգային գետնի վրայ տեղի ունեցող իրադարձութիւնները:

«Անուար» օրաթերթը առաջին էջով գրած է. «Ժողովուրդը հարց կու տայ, որ վարչապետ Հարիրի ինչ ծրագիր մշակած է պարուստի տագնապը դիմագրաւելու համար՝ դպրոցական վերամուտին եւ նոր տուրքերու յանձնարարութեան լոյսին տակ:

«Տիար» խմբագրականով մը նշած է, թէ այսօրուին սկսեալ եւ որոշ ժամանակաշրջանի մը համար թերթը պիտի դադարի լոյս տեսնել՝ առ ի զօրակցութիւն «Էմ. Թի. Վի.» կայանին: Նախարարաց խորհուրդի գումարած նիւտին մասին «Մաֆի» գրած է, թէ նախարարաց խորհուրդը կրկին չանդրադարձաւ տեղեկատուական մարզին հարցերուն. ընդդիմութիւնը մտահոգ է, որ այս թղթածրարին լուծումը ձգձգումներու պիտի ենթարկուի՝ յատկապէս դատական մարզին մէջ կատարուած փոփոխութիւններու լոյսին տակ. այն փոփոխութիւններուն համար որդեգրուած ժամանակը ցոյց կու տայ, որ անոնք կուտ դատական բնույթ ունենան, այլ կապուած են քաղաքական հարցերու եւ յատկապէս «Էմ. Թի. Վի.»-ի հարցին:

«Տիար»-ի համաձայն, նախարարաց խորհուրդի նիստին բացակայեցան քաղաքական հարցերու եւ պատմութեան թղթածրարները. դատաւորներու պաշտօններու փոփոխութեան ծիրին մէջ դատաւոր Չուէյնի պաշտօնը փոխուեցաւ. այս պատճառով «Էմ. Թի. Վի.»-ի դատին վերաբացումը կրնայ երկարիլ մինչեւ նոր դատաւորի նշանակումը:

«Լիուս» Էշրեֆի մէջ տեղի ունեցած համախմբումին մասին գրած է. «Էշրեֆի մէջ ազգային խտուրտած զօրակցութիւն Սուրիոյ համախմբումին ընթացքին խօսք առնող 22 անձերը մարմնավորեցին լիբանանեան պաշտօնական եւ ժողովրդային կեցուածքը ամերիկեան Զոնկրեանի ներկայացուած օրինագիծին առնչութեամբ. Միացեալ Նահանգներու ծրագիրը թիրախ ունի Լիբանանի ու Սուրիան ինթիֆատայն եւ ընդդիմութեան վրէժ լուծելու համար»:

Ծար.ը՝ էջ 10

ԱՉԳ. Ս. ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ ՎԵՐԱՄՈՒՏ

Ազգ. Ս. Զառանցիկ Մանկանց վարժարանի տնօրէնութիւնը այսու կու գայ յայտնելու, որ 2002-2003 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները, հին ու նոր աշակերտներու համար կը շարունակուի ամէն օր, առաւօտեան ժամը 9:00էն 12:00, բացի Ծաբաթ օրերէն: Դիւրացնելու համար վերամուտի աշխատանքները՝ ծնողներէն կը խնդրուի արձանագրութիւնները կատարել մինչեւ Գործընթացի, 20 Սեպտեմբեր 2002:

1.- Նորեկ աշակերտները պարտին իրենց հետ բերել «Իխրաժ քայտ», նախորդ տարուան վիճակագրոյցը եւ փոխանցման գիր՝ վաւերացուած կրթական նախարարութենէն (Իֆաւտ):

2.- Վերաքննութիւնները (Գ. Ե. եւ Զ. դասարաններուն համար) տեղի կ'ունենան հետեւեալ թուականներուն.

Երկուշաբթի, 23 Սեպտեմբեր 2002 - հայերէն եւ հայերէնով դասաւանդուող ճիւղեր:

Երեքշաբթի, 24 Սեպտեմբեր 2002 - արաբերէն եւ արաբերէնով դասաւանդուող ճիւղեր:

Գործընթացի, 25 Սեպտեմբեր 2002 - անգլերէն: 3.- 2002 - 2003 կրթական տարեշրջանի վերամուտ

Գործընթացի, 2 Նոյեմբեր 2002 - նախակրթարան: Գործընթացի, 3 Նոյեմբեր 2002 - մանկապարտէզ:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅ ՀՈՒՓՈՒՄԵՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Տնօրէնութիւնս բաց կը յայտարարէ 2002 - 2003 դպրոցական տարեշրջանի արձանագրութիւնները, 2 Սեպտեմբեր 2002-էն սկսեալ, ամէն օր առաւօտեան ժամը 8:30էն 14:00, բացի Ծաբաթ եւ Կիրակի օրերէն:

Դիւրացնելու համար վերամուտի գրասենեակի աշխատանքները՝ արձանագրութիւնը պարտադիր է ներկայ աշակերտներու:

Հայ դպրոցը տունն է հայ զաւակին, ուր՝ մօր կաթին մամ, կը սնանի հայ ոգիով, կը ստանայ աւելջ իր հայեցի պատկերացումները եւ կը դառնայ չորս լեզուներով զարգացած, ապագայի օգտաշատ հայ, քրիստոնեայ, սրբաբար քաղաքացի:

Նորեկ աշակերտները պարտին իրենց հետ բերել ինքնուրուի թուղթի լուսապատճէն կամ «Իխրաժ քայտ», մկրտութեան վաւերագիր, պատմաստեղծու եւ առողջ վիճակի վկայագիր եւ 4 լուսանկ

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ԿԵՐՈՍԱՍԱՐՏԻՆ 87ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՍԱՐՏԻՆ ԱՆԺԱՄԱՆՑԵԼԻ ԱՒԱՆԴԸ

Այս գրութիւնը իբրև բանախօսութիւն ցերեպայացուած է Ֆրեդոնի մէջ կայացած Մուսա Լերան հերոսամարտի հանդիսութեան, Շ. Յ. Բանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամ Յակոբ Զանգազեանի կողմէ:

Վայրկեան մը լուռ, յոտնկայ յարգեմք յիշատակը Մուսա Լերան բարձունքներուն վրայ ինկած 18 հերոսա նահատակներուն, մերօրեայ ազատագրական ճամբուն վրայ նահատակուած ազատամարտիկներուն, Հայաստանի եւ Արցախի ազատութեան եւ անկախութեան համար իրենց կեանքերը նուիրաբերած հերոս մարտիկներուն:

Նախքան օրուան նիւթին անցնիլը՝ կ'ընգեմ սրտանց շնորհակտորել Յրեգնոյի Մուսա Լերան միտքեան պատասխանատուները, այսօրուան տօնախմբութեանց կազմակերպիչ յանձնախումբին անդամ-անդամուհիները, Աստուածածնայ տօնին առիթով՝ ազգօգուտ այս բացառիկ նախաձեռնութեան համար:

Շնորհակալութիւն սիրելիներ, Ձեր անգամ ըլլալով ձեր կողմէ ինծի ուղղուած հրաւերին համար:

Այս առիթը օգտագործելով՝ ձեր բոլորին կը փոխանցեմ կարօտագին ողջոյններ Քանաճայի մէջ բնակութիւն հաստատած մուսախոսներուն, որոնք կը պատաստուեն յառաջիկայ շարժապարհին, նախորդ տարիներու նման, Քէմպրից քաղաքին մէջ անգամ մը եւս հոծ բազմութեան յիշատակելու Ս. Նաչի տօնը եւ Մուսա Լերան հերոսամարտին տօնախմբութիւնը:

Տ. Նարեկ Ա. քհնյ. Շրիքեան, Յարգարժան հայորդիներ եւ սիրելի համագործակցներ, Պապենական մեր հողերէն հազարաւոր մղոններ անդին, այսօր հաւաքուած ենք այստեղ միասնաբար նշելու հպարտառիթ պատմական եւ անկրկնադարձալի երեք առիթներ:

Այսօր Ս. Նաչի տօնն է, Մուսա Լերան հերոսամարտին 87րդ եւ Հայաստանի Հանրապետութեան վերանկարացման 11րդ տարեդարձը:

Կարժէ անդրադառնալ պատմական արժէք ունեցող այս իրադարձութիւններուն եւ անոնց իմաստալից պատգամներով սպառազինուած դէպի ապագայ մեր երկրի շարունակելի վերանորոգում, հաստատակամ եւ աւելի հզօրացած:

Վերացման Ս. Նաչի տօնը Հայաստանեայց եկեղեցւոյ Հինգ տաղաւարներէն ամէնէն խորհրդանշականն է, Կրօն դարուն պատհած պատմական դէպքեր մը պաշտօնական յիշատակումը, որ կը պատգամէ մեզի, թէ ինչպէս քրիստոնեայ աշխարհը խաչափայտի ազատագրութեան եւ պաշտպանութեան համար պատրաստուած պարսից կանոնաւոր բանակին դէմ եւ յաղթանակներ ձեռք բերաւ:

Նաչի տօնը յաւելեալ արժէք եւ նշանակութիւն ունի Հայաստանեայց եկեղեցւոյ համար, որովհետեւ հայոց այրուածին ալ բերաւ իր պատուաբեր եւ կարեւոր մասնակցութիւնը Քրիստոսի խաչակրացիներուն մէջ եւ արդարօրէն մարտիկներուն մէջ:

տրնչումները տպաւորեցին նաեւ ամբողջ արեւմտեան աշխարհն ու Եւրոպան, եւ այդ ճամբորդութիւններուն փաստական վկան հանդիսացաւ օտարազգի գրագէտ Յրանց Վերֆէլ, որուն «Մուսա Լերան 40 օրերը» խորագրով լայնածաւալ վէպը թարգմանուեցաւ բազմաթիւ լեզուներու՝ տակաւին ներշնչելով օտարազգիները, ոգեւորելով նաեւ մեզ եւ բոլոր անոնք, որոնք օրհասական պահերուն հաւատքի եւ կամքի ուժին վստահած յաղթանակներ նուաճելով հերոսապատմանը կ'արձանագրեն:

Այսօր հպարտօրէն կը յիշատակենք նաեւ Հայաստանի վերանկարացման 11րդ տարեդարձը:

Սիրելի՛ Հայորդիներ, անցնող դարասկզբին 1915 թուականի եղեռնագործ թուականէն միայն երեք տարիներ ետք ո՞վ կրնար երեւակայել թէ 1918 Մայիս 28ին պիտի ծագէր հայ անկախ պետականութեան պայծառ արեւը՝ Հայոց մթազայծ երկնակամարին վրայ:

Սիրելի՛ Հայորդիներ, անցնող դարասկզբին 1915 թուականի եղեռնագործ թուականէն միայն երեք տարիներ ետք ո՞վ կրնար երեւակայել թէ 1918 Մայիս 28ին պիտի ծագէր հայ անկախ պետականութեան պայծառ արեւը՝ Հայոց մթազայծ երկնակամարին վրայ:

Այն՝ կարճատեւ եղաւ հայոց առաջին անկախութիւնը: Սակայն ազատ եւ հայափայլ ապրելու ոգին միշտ վառ ու անխաթար մնաց հայ ժողովուրդի տարասփիւն եւ հայրենի հատուածներու հոգիներուն մէջ: Եւ պատահական չէր, որ 1988ի փետրուարեան օրերուն, հայրենի ժողովուրդը ականջալուր արամամանուկեաններու վաւերական կտակին, քաջութիւնը ունեցաւ փշրելու գինք շղթայած եւ ազատութիւնը ընծայեց:

Այսօր, Հայաստանի անկախութեան լուսաշող թուականէն 87 տարիներ ետք, մեր հայրենիքը դարձեալ կը մնայ կիրակէտը այն անբացատրելի գոհաբերութիւններուն, զորս երէկ հայ մարդը գիտցաւ ստեղծել, զերեքմաններէն ոտքի կանգնելով՝ քայլք դէպի անկախութիւն, քայլք փշոտ ճանապարհներէն ու քայլք աննկուն կամքով ու նախորտակ հաւատքով:

Վերանկարացած Հայաստանը դարձաւ քայլք սերունդներու յիշուող սուգին մէջէն, գաղթ սերունդներու յիշուող սուգին մէջէն, գաղթ սերունդներու յիշուող սուգին մէջէն:

Այն՝ Մուսա Լերան առիւծաօրտ գաւակները, վստահած իրենց պապենական սրբազան լեռան, գերմարդկային քաջութեան, 1915 թուականի եղեռնի համատարած սուգին մէջէն, գաղթ սերունդներու յիշուող սուգին մէջէն, գաղթ սերունդներու յիշուող սուգին մէջէն:

ՀԱՄԲՈՒՐԵԼԻ ՅԻՇԱՏԱԿ

ՄԻՍԻԹԱՐԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՐԲԱՒԱՅՐ ԳԵՈՐԳ ՊԱԼԵԱՆԻ ՄԱՆՈՒՆ ԶԱՌԱՍՈՒՆԵՐԻՆ ԱՌԻԹՈՎ



Գեորգ Պալեան

Կարելի չէ կանգնիլ անոր կեանքի ուղիին մշտադաւար պատմութեան դիմաց եւ սրտաբաց չխոնարհիլ ու չհիանալ այն ամբողջական նուիրումին, որուն ղօղանը պիտի պատմէ սրբութիւններու նուիրուած հաւատացեալներու կենցաղին մասին:

Հայր Գեորգ Պալեան, մկրտութեան անունով էմանուէլ, ծնած է 1937ին, Թրիփոլի: Բ. Աշխարհամարտին յաճախած է Յիսուսեան միաբանութեան Ս. Թերէզ եկեղեցիին յարակից դպրոցը: Մանուկութեան տարիներուն խորապէս տպաւորուած հաղորդութեան խորհուրդով՝ հօրենական տան թոնիրին պատերուն վրայ կը պատրաստէ նշխարներ եւ իր հասակը ծածկող գունակար գգեստներ հագած՝ զանոնք թաղեցիներուն կը բաժնէ իրրեւ հաղորդութիւն, եկեղեցին միախառնելով իր առօրեային:

Տասներկու տարեկանին կը դառնայ Մխիթարեան դպրեմանի սան եւ իր ծնողքին ուղղուած նամակի մը մէջ կը գրէ. «Ձիւ մի՛ փնտռէք, ես Պիքֆայայի վանքն եմ»: Յաջորդ տարի, 1950ի Յունուարին կը հասնի Ս. Ղազար: 1962ին կ'աւարտէ Հոռոմի Գրիգորեան Միջնակարգի համալսարանը եւ նոյն տարին կը ձեռնադրուի Ս. Ղազարի վարդապետ: Կը ծառայէ հայաշատ գաղութներու մէջ: 1991ին կ'ընտրուի Մխիթար արքայապետ 11րդ յաջորդը եւ մինչեւ 1994 կը ծառայէ իրեն Մխիթարեան միաբանութեան արքայապետ 1996էն 2000 Հայաստանի Տաշիրի շրջանին մէջ կը նուիրուի հոգևակալ գործունէութեան՝ դառնալով անձնագոհութեան ղեկեցիկ օրինակ ժամանակակից պատմութեան մէջ:

Այժմ մահուան քառասունքի հոգեհանգիստ... Կանգնած է ան իր հաւատքին անվախճան ճանապարհին, մտերիմ ու ժպտուն, հարազատ՝ իր հանդիպած իւրաքանչիւր անձին. անոր կեանքին մէջ չկան ծանօթներ կամ անծանօթներ: Ան հայրական նոյն հոգեմտութեամբ ու բարեգործ սրտով մօտ էր բոլոր ազնիւ նպատակներուն ու գործերուն: Բազմաձայն ծառայութեան վագր մը եղաւ անոր կեանքը, սկսեալ հօրենական թոնիրէն բոլորով իր նշխարներէն, մատուցուած՝ բոլորին:

Հանդիպած ենք ընտրեալներու, որոնց մէջ ոմանք, մշտաշողները, մաս կազմած են մեր կեանքին հարստութեան: Հայր Գեորգի վատակար կարելի չէ հաշուել զբաժանուածներու դարպասներուն ետին: Իր սերմնացան բուռով ան իր էութեան ու հաւատքին կենարար ճառագայթները արձակած է կեանքի բազում պահերուն եւ զանոնք հասցուցած է բոլոր խաչներուն: Իրմով հաւատացեալ մենք կը դառնանք հանդիսաւոր բախտաւորներ իր կարեւորագոյն երթին, եւ ան կը ծաղկազարդէ մեր յիշողութեան դաշտերը:

Մարդկային հոգիներու մտքի մէջ կայ քարացած դրախտ մը, ուր յոյս կ'առնեց ան իր լուռ աշխատանքով: Երբ վանքեր կ'արձագանգեն սրբազան կեանքի մը պատգամները եւ կեանք մը կ'ուրուանայ հաստ ծառայութեան բերքով, ուրախութիւն պարգեւելով գրկուած ու կարօտ հոգիներու, ահաւասիկ կը բացուի դուռը դրախտի, որուն մշտական բնակիչը դարձաւ հայր Գեորգ:

Անոր խորանը քարաշէն եկեղեցիին մէջ չէր միայն, այլ զինք կ'առաջնորդէր դէպի ժողովուրդին տրտում

եւ տառապող խաւերը, ուր մարդը կարիքը ունէր մարդուն եւ Աստուծոյ օգնութեան, փարատելու համար իր ցաւերը: Հայր Գեորգ, ճշմարիտ սամարացի, ճշմարիտ կրօնաւոր, ճշմարիտ քրիստոնեան՝ իր էութիւնն ու ամբողջ կարողութիւնը ի սպաս դրաւ կարիքաւորներու օգնութեան: Հաւատարիմ մնալով Մխիթարեան ուխտին՝ ան խանդավառեց մեր հաւատքը:

Արդարամտութեամբ ու բարութեամբ յորդուեն՝ ան նրբօրէն կը կշռադատէր երեւոյթներն ու մարդիկը՝ իրենց բոլոր վիճակներուն մէջ եւ իր լայնատես զատուածքով կը մնար միշտ սիրելի: Անտեսանելի տեսնելու ազնուաշունչ զգայնութիւն մը զինք կը պահէր միշտ փնտրուած ու ընդառաջող:

Իրերը ներկայ են անոր իւրաքանչիւր գործին ու խօսքին մէջ եւ կ'ընթանան դէպի յաւերժը հայրենականին: Ժուժկալ ու զուսպ հայր Գեորգ եղբայրացաւ հայ գիւղացիին հետ: Մխիթար Մեղաւտացի եւ նման նուիրեալներ ներկայ են հայրենիքի մէջ, հայրենի հողին վրայ ապրող հայ մարդուն սրբազան ճիգերուն հետ: Հայրենիքը այժմ եւ յաւիտեան կարիքը ունի իր որդիներուն հարազատութեան:

Հայր Գեորգ իր կեանքին վերջալույսով դարձեալ ղեկեցիկացուց հայոց պատմութեան երկնակամարը, Հայաստանի մէջ ծնելու համար նոր առաւօտներ՝ մաքրագուած եւ աստուածաշունչ կենցաղով:

Ով տար ինձ գառաւօտն նաւասարդի... Եւ սրտաձօտիկութիւնը հայր Գեորգի: Պատահական մեր ճանդիպումները մխիթարեան կառոյցներու մէջ բազմաձայն արմատներ կ'արձակեն, ինչպէս այսօրուան հանդիպումը՝ անոր քառասունքին հետ: Հայր Գեորգի կեանքին պատուաբեր էջերով կը մեծնայ Ս. Ղազար կղզին:

Ան կառչած ու հաւատարիմ մնաց իր ուխտին... Մնաց մեզի համար համբարելի յիշատակ:

ՅԱԿՈԲ ԿԻՒՈՅԵԱՆ

ԱՄԵՆԱՓՐԻԿՅՍ

- Քեզ մէջ չեմ խնդրեր առողջութիւն Տուր ինծի խաչիդ համբերութիւն: Քեզ մէջ չեմ խնդրեր երկար կեանք Տուր ինծի կատարել թու կամք: Քեզ մէջ չեմ խնդրեր անցաւ մահ Տուր ինծի մեղքերուս հանդէպ ահ: Քեզ մէջ չեմ խնդրեր երկինքի մէջ փառք Տուր ինծի քեզ սիրելու փափաք: Յաւիտեանս, յաւիտենից, ամէն Հայր Գեորգի գրած աղօթքէն է՝ գտնուած իր սնարին Երեւան - 07/08/2002

ՄԱՆՈՒՆ Ի ՅՈՒՇ

ՏԻՐԱՄԱՅՐ ՍԻՐՎԱՐԴ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Սեպտեմբեր 10ի լոյս 11ին Քեսապի իր հարազատ տան մէջ շիջեցաւ ազնուական հայուհի մը՝ Տիրամայր Սիրվարդ Սարգիսեանը:

Տիրամայրը ծնած էր Քեսապի մէջ, 29 Յուլիս 1923ին Արրաւան եւ Մարի Փոլատեանի բազմադամ ընտանիքին մէջ: Ուսումը ստացած էր գիւղի դպրոց, եւ, տակաւին հազիւ պարմանուհի, 1939ին իր կեանքը կապած էր երիտասարդ ուսուցիչի մը, Արամ Սարգիսեանի հետ: Եւ այս գոյգը շուրջ 40 տարիներ միասնաբար պաշտօնավարեց Քեսապի, Հաւիտէ՛ Հայկազեան վարժարան, ապա Գարմիշի եւ հուսկ՝ Լաթաքիա, ուր Արամ ստանձնած էր Ազգային վարժարանի տնօրէնութեան պաշտօնը, իսկ Սիրվարդ դարձած էր վարիչ-մանկաբարձիկ պանուհի: Իրրեւ այդ, Սիրվարդը սիրելի դարձած էր իր նոր ու գեղեցիկ յայտարարներով, ճաշակաւոր եւ անմոռանալի ամազերի հանդիսութիւններով:

Սարգիսեանները բախտաւորուած էին երեք գաւակներով, անդրանիկը՝ Տաթեւաւոր. Սարգիսեանն է, Գարեգանքի երբեմնի տեսուչ, սիրուած առաջնորդ Բերիոյ եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմերուն եւ այժմ դասախօս՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինի Գեորգեան հոգեւոր ճեմարանին մէջ: Երկրորդը՝ Վահէն, արդէն հուշակալոր անունը է Սիրվարդի մէջ՝ իրրեւ համակարգչային համակարգի առաջատար մէջ ընկերութեան տնօրէն եւ նախագահ: Ընտանիքին կրտսերագոյնը՝ Թամար, ինք եւս կարեւոր պաշտօն կը վարէ «Նիքի» ընկերութեան մէջ:

1968ին էր, որ Պէյրութի մէջ, ուր առողջական պատճառներով քաշուած էր, ստիւր անակնկալ տագնապի զոհ կ'երթայ Արամ Սարգիսեան: Տիրամայր Սիրվարդը, անկէ ետք յաճախ առանձինն, ապրեցաւ եւ աշխատեցաւ ազգային եւ եկեղեցական աշխուժ կեանքով: Լիրանահայտ օգնութեան խաչի եւ յատկապէս Կիլիկիոյ կաթողիկոսարանի խնամակալ տիկնանց միտքեան նախագահն էր եւ մեծ սատար հանդիսա-

ցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկալիշատակ Գարեգին Բ. (ապա Ամենայն Հայոց Գարեգին Ա.) կաթողիկոսին: Տարբեր չէր կրնար ըլլալ: Տիրամայրը «պարտաւորեցնող» շրջապատ ունէր: Իր եղբայրը՝ հոգեւոր յոյս Գրեգորի կաթ. Փոլատեանն էր, աստուածաբանութեան դոկտոր, դպրեվանքի երբեմնի տեսուչ: Ինչպէս յիշեցիք՝ իր որդին Տաթեւ Սրբազանն էր, իր տագրող որդին ալ՝ Գարեգին Վեհափառը, որուն կաթողիկոսութեան ամբողջ շրջանին (Անթիլիս, 1977-1995) Տիրամայրը հարազատ մօր գուրգուրանքով խնամեց:

Վերջին տարիներուն, «Ամենայն Հայոց Տիրամայր» վայելեց յարգանքը իր շրջապատին ուր որ ալ ըլլար, Անթիլիս, «Տիրամայրութեան թաղը», Սան Յրանչիքօ թէ Հայաստան, կը վայելէր իր գաւակներուն եւ թոռներուն քաղցրութիւնը: 2002 թ. ամբար երեք ամիսով դարձաւ Հայաստան եկաւ, իր սրբազան գաւակին մօտ, եւ իրրեւ հիւրը Ամենայն Հայոց վեհափառին, մնաց Ս. Էջմիածնայ վանատան մէջ՝ արժանաւարով բոլորի յարգանքին եւ սիրոյն:

Տիրամայր Սիրվարդ կեանքով եւ սիրով լեցուն կին էր. աղօթանուէր, բարի, աւանդապահ, հիւրանէր, գուրաթ եւ մէկը, որ իր շուրջ միշտ ուրախութիւնն էր սէր կը տարածէր: Հիմա ալ, որ կեանքէն հեռացած է, մեր բոլորին մտքերուն մէջ պիտի մնայ իր այդ պայծառ եւ շնչող դիմագծութեամբ:

Տիրամայր Սիրվարդ Սարգիսեանի յուղարկուորութիւնը կը կատարուի Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, 17 Սեպտեմբեր 2002ին եւ մարմինը կը հանգչի իր մայրական մօտ, որուն վերջերս տարօրինակ կերպով կը փնտռէր «Մայրիկ, մայրիկ» ըսելով: Խաղաղութիւն իր խոնջ մարմնին եւ մշտնջենական լոյս իր յիշատակին:

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍԱՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ


ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՔԵՐ

«ԱՐԱՐԱՏ» ԺԱՊԱԼԷՆԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԿԱՅՔԵՐ



Քանի շարժապատկերի փառատունի իր առաջին ցուցադրությունն էր ամիսներ առաջ արդեն «Արարատ» ժապաւէնը մեծ աղմուկ բարձրացուցած էր մամուլին մէջ, յատկապէս՝ իր արժարժան անվանին և թուրքերի հակազդեցութեան պատճառով:

Քանի նաև ժապաւէնը ցուցադրուեցաւ Մոսկուայի փառատունին, ինչպէս նաև՝ Թորոնթոյի փառատունին, որ պիտի աւարտի կիրակի, 15 Սեպտեմբերին: Այս, ինչպէս նաև այլ ցուցադրութիւններու ընթացքին ժապաւէնը շարունակեց իր շուրջ ստեղծել մեծ հետաքրքրութիւն:

«Արարատ»ի մասին լայն տեղեկութիւններ ստանալու համար կարելի է դիմել համացանցի շարք մը կայքերու, որոնց մէջ ուշագրաւ է www.ararat-the-movie.com հասցեով կայքը, որ թէեւ ձեւաւորումի իմաստով բացառիկ կարելի չէ նկատել, սակայն անհասկած հարուստ է տեղեկութիւններով: «Արարատ»ի եւ Հայկական Յեղափոխութեան մասին:


Կայքը կ'ընդգրկէ «լիք»-ը «Արարատ» ժապաւէնին հատուածներու, կը ներկայացնէ «Արարատ»ի հետ առնչուող լուրեր, յօդուածներ եւ հարցազրոյցներ: Հայկական Յեղափոխութեան հետ առնչուող այլ բաժիններ ներկայացուած են ցնցիկ կերպով՝ լուսանկարներ, թիւեր եւ տուեալներ...:

«Արարատ»ի մասին տեղեկութիւններ ստանալու համար կարելի է դիմել նաև Միացեալ Նահանգներու մէջ ժապաւէնի արտադրիչ «Միարմաքս» ընկերութեան պաշտօնական կայքը՝ www.miramax.com:

Միև կողմէ, Աթոմ Էլոյիանի պաշտօնական կայքին մէջ (www.egofilmarts.com) «Արարատ»ի մասին ցարդ դրուած է միայն պարբերութիւն մը, ուր կը կատարուի ժապաւէնին հակիրճ ծանօթացումը:

«Արարատ»ի մասին միջազգային մամուլին մէջ երեւցած արձագանքներուն օրը օրին քայլ պահելու համար կարելի է այցելել «Կուռնկ» լրատուական ցանցին կայքը՝ www.groong.com/news:

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԲՋԻՋԱՅԻՆ ՀԵՌԱԶԱՅՆՆԵՐՈՒ ԱՐԱԳ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ




Բջիջային հեռաձայնը օրըստօրէ կը դառնայ աւելի անձնական ու վստահելի սարք մը, որ կարելի էր զեր կը խաղայ տեղեկութեան ամբարանումի, հաղորդակցութեան, գործի եւ ժամանցի մէջ: Արդարեւ, արհեստագիտութեան զարգացումով բջիջային հեռաձայնը յաւելեալ դերեր կը ստանան մեր կեանքին մէջ՝ ծառայելով իրեն հեռաձայն, գրպանի համակարգիչ, «կէյմպոյ», համացանցի կապուող սարք, եւ այլն:

Այսօրուան գործի աշխարհին մէջ, ուր պաշտօնեաներ եւ գործարարներ տեւաբար շարժումի մէջ են՝ հանդիպումէ հանդիպում, երկրէ երկիր, բջիջային հեռաձայնը վերածուած է անփոխարինելի սարքի մը՝ արագ եւ վստահելի:

Բջիջային հեռաձայններու աշխարհի մեծագոյն ընկերութիւնը՝ «Նոքիա», վերջերս հրապարակ իջեցուց հաղորդակցութեան իր նորագոյն սարքը՝ «9210 ի. Բոմիւնիք»-ը: Բջիջային հեռաձայնի իր «աւանդական» դերին կողքին, սարքը համացանցին կապելու, ե - նամակներ եւ ֆաքսեր ուղարկելու, վիտեօներ գրտելու երգեր ունկնդրելու եւ յօդուածներ գրելու իտէլական միջոց մըն է: Գունաւոր պատտառով այս սարքը օժտուած է նաև «ուափ»ի եւ կարճ պատգամներու առաջման գրութիւններով:

ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՌԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Գաղտնիք մը բացայտած չենք ըլլար, եթէ անվարան հաստատենք, որ պատկերասփիւռը անցնող յիսնամեակին ինքզինք փաստած է իրբեւ առտնին սարքերու մէջէն կարելի էր ներմուծել, հակառակ այն իրողութեան, որ տան մէջ ան պարզապէս ժամանցի համար կ'օգտագործուէին թիւերն ու տուեալները խօսուն են: Միացեալ Նահանգներու մէջ Հազարի վրայ 806 հոգի, իսկ Եւրոպայի եւ Ճափոնի մէջ Հազարի վրայ 710 հոգի ունի իր անձնական պատկերասփիւռը:



Իրբեւ ժամանցի սարք, մարդոց մօտ գտած իր լայն տարածումին առնչութեամբ, պատկերասփիւռը նաև մեծապէս շահեկան եւ օգտաշատ է զանազան բնագաւառներու մասնագէտներու համար: Այսպէս, օրինակ, ապահովութեան ուժեր պատկերասփիւռի արհեստագիտութիւնը կ'օգտագործեն շէնքեր եւ համալիրներ հսկողութեան տակ պահելու համար, վերջիններս տեղեկութիւններ ստանալու համար մարդկային մարմինին մէջ կրնան գտնուել գերփոք պատկերասփիւռի քամբաներ՝ դիւրացնելով հիւանդու-

րորոնտաքրիվիթի», հետագային օգտագործուեցաւ պատկերասփիւռի քամբանի խողովակին մէջ: 1888ին գերմանացի բնագէտ Վիլհելմ Հայվախս նկատեց, որ կարգ մը նիւթեր, երբ լոյսի ճառագայթներ ստանան, ելեկտրոններ կ'արձակեն: «Ֆոթոէմիլը» կոչուող այս յատկանիչը օգտագործուեցաւ նաև պատկերասփիւռի արհեստագիտութեան մէջ:

ԳՈՒՆԱՒՈՐ ՊԱՏԿԵՐԱՍՓՈՒՄՆԵՐ

1904ին իսկ գիտնականներ կը գիտակցէին, թէ կարելի էր օգտագործել պատկերասփիւռներ կատարել՝ օգտագործելով 3 հիմնական գոյները՝ կարմիր, կանաչ եւ կապույտ: 1907ին, հայազգի Յովհաննէս Աղամեան ստեղծեց սարք մը, որ հանդիսացաւ երկգոյն պատկերասփիւռումի զարգացման առաջին քայլը: Հետագային, Աղամեան կատարեց նաև այլ գիւտեր եւ նկատուեցաւ գունաւոր պատկերասփիւռը:

1941ին 1945 թ. Աշխարհամարտին պատճառով պատկերասփիւռումները դադարեցան Մ. Նահանգներու մէջ, իսկ 1946ին անոնք վերսկսան մեծ թափով, եւ պատկերասփիւռի ճարտարաբանութեան տը սկսաւ հսկայական վերելք արձանագրել:

ՊԱՏԿԵՐԱՍՓՈՒՄՆԵՐ

1923էն 1925 գիտնականներ օգտագործեցին գերմանացի Փօլ Նիփօրտի «Սքեմիկ տիսք»-ի գրութիւնը՝ զարգացնելով պատկերասփիւռումի փորձառական սարքեր: Գիտական իրերայալորող նուաճումներու շնորհիւ կարելի եղաւ 13 Յունւար 1928ին Նիւ Եորքի մէջ ցուցադրութեան դնել առտնին առաջին պատկերասփիւռը՝ պատրաստուած ամերիկացի գիւտարար Ընրսթ Ալիքսանտրոսին կողմէ: Շուրջ 7,5 սանթիմետր պատտառով այս պատկերասփիւռին վրայ նկարները այդքան ալ յստակ չէին եւ կը թրթռային, սակայն սարքը օգտագործելի էր: «Ճէնթրել էլեթթրիք» սկսաւ արտադրել այս նախատիպային պատկերասփիւռը:

1936ին Լոնտոնի մէջ սկսաւ հանրային պատկերասփիւռի ծրագրի ներդրումը առաջին ցուցադրութիւնը: 1939ին Միացեալ Նահանգներ հետեւեցան նիւր, որ կը կոչուէ «Ֆո-

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱԳԱՄԵԱՆ՝ ԳՈՒՆԱՒՈՐ ՊԱՏԿԵՐԱՍՓՈՒՄԻ ԳԻՒՏԱՐԱՐ

1907ին, Յովհաննէս Աղամեան Պերլի-նի արտօնագործերու կայսերական պիւրոյին կը ներկայացնէ իր ստեղծած մէկ սարքը, որ «Ելեկտրական-նութեան միջոցով հաղորդող պատկերի կամ շարք մը պատկերներու սեւեռումի եւ կրկնակի վերարտադրութեան աշխատանք կը կատարէ»: Միեւնոյն տարին ալ կը ստեղծէ այլ սարք մը, որ կը հանդիսանայ երկգոյն պատկերասփիւռումի զարգացման առաջին քայլը:



1907ին, Յովհաննէս Աղամեան կ'իրագործէ նաև 600 քիլոմէթր հեռաւորութեան վրայ գունաւոր պատկերի սփռումի աշխարհի առաջին փորձը:

1925ին Աղամեան կը ներկայացնէ եռագոյն պատկերասփիւռի առաջին նախագիծը, որ Նիփօրտի սկաւառակի բարեփոխուած մէկ տարբերակը կ'ըլլայ եւ կը կոչուէ «Աղամեանի սկաւառակ»:

Աղամեանի առաջարկած եռագոյն դրութիւնը առաջին անգամ կիրարկուած է Լոնտոնի մէջ, 1928ին: 1945-1951ին մամբրիկեան «Սի. Պի. Էս» ձայնասփռումի ընկերութեան մօտ Աղամեան կատարած է փորձառական աշխատանք, որուն յետագայ երկու տարիներու անոր համակարգը ընդունուած եւ գործադրութեան դրուած է:

Արգարեան ծնած է 1879ի Փետրուարին, Պարուի մէջ եւ մահացած 1932ին՝ Լեյնհիլթաւ: 1970ի Յունիսիս անոր անուանեցին փոխադրուած են Երեւան:

գիներով վիտեօ-քամբաներ:

ԹՈՒՎՈՐԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՓՈՒՄՆԵՐ


«Անալոկ» դրութեամբ, պատկերասփիւռներ ընդունող սարքերու կողքին, զարգացան նաև թուագրային պատկերասփիւռներ, որոնք այնչափ միջոցով փոխանցուած ելեկտրոնային ալիքները կը վերածեն թուագրային քոդերի (0ի եւ 1ի յարաբերականութիւն): Այս դրութիւնը կը բանան:

թեամբ պատկերները շատ աւելի բարձրորակ կը ներկայացուին:


ՆՈՐ ՀՈՐԻՉՈՆՆԵՐ

Համակարգիչը եւ պատկերասփիւռը հետզհետէ կը միաձուլուին: Յառաջիկայ տարիներուն շատ աւելի տարածուած պիտի ըլլան համակարգիչ-պատկերասփիւռային ալիքները կը վերածեն թուագրային քոդերի (0ի եւ 1ի յարաբերականութիւն): Այս դրութիւնը կը բանան:

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԺՊԻՏ



«Հինգ տարի առաջ ամուսինս եւ ես սիրահարեցանք համացանցին վրայ: Մեր ամուսնութեան տարեդարձը տօնելու համար վերջապէս որոշեցինք դէմ դիմաց տեսնուիլ...»:



«Այն պահին, երբ համացանցին վրայ առաջին անգամ գրուեցինք, գիտցայ, թէ դուն ուրիշներէն շատ աւելի լաւ արարած մըն ես...»:

Պատրաստեց՝ ԽԱՉԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

Մանկապատանեկան



ԻՆՉՈՒՄ ԾՈՒՆ ՄԸ ՄԻՇՏ ԻՐ ՏԵՐԸ ԿԸ ՃԱՆՉՆԱՅ

Որովհետև շան հոտառութիւնը շատ շատ զարգացած է: Ան կրնայ նոյնիսկ երկու իսկական զոյգեր իրարմէ գանազանելի գանոնք հոտուրտալով: Հետեւաբար ան ոչ մէկ դժուարութիւն կ'ունենայ ամբողջին մէջ ճանչնալու իր տէրը: Առաւել, ան այնքան կապուած կ'ըլլայ իր տիրոջ, որ պատրաստ կ'ըլլայ ամէն ինչ ընելու՝ զայն պաշտպանելու կամ չկորսնցնելու համար:

ԻՆՉՈՒՄ ԾՈՒՆԵՐԸ ՊՈՉ ՄԸ ՈՒՆԻՆ

Իրարու հետ հաղորդակցելու համար: Որովհետև իստեղու կարողութիւնը չունին, անոնք իրարու հետ կը հաղորդակցին հաջոցներով, դէմքի արտայայտութիւններով եւ... պոչի շարժումներով: Անոնք իրենց պոչը կը շարժեն. անոնք




Ուրախ են կամ ընդհակառակը՝ զայրացած: Անոնք իրենց պոչերը ոտքերնուն քին: Ան շունին բերանէն դուրս կը թափի:

ԼՈՒՐԵՐ ԱՇԽԱՐՀԷՆ

● Այս ձմրան դեղին ձիւն տեղացած է Մոնկոլիոյ մէջ: Այս երկիրը կը գտնուի Չինաստանի հիւսիսը, եւ հոն օդը շատ ցուրտ կ'ընէ: Այս սարի հովիտներուն պատճառով ձիւնը խոռոչուած է մօտակայ անապատի աւազներուն, եւ տեղացող ձիւնը եղած է դեղին:

● Բուսազէտ մը Աւստրալիոյ անտառներէն մէկուն մէջ գտած է ծոռ մը, որուն տեսակը զոյութիւն ունի նուազագոյնը 90 միլիոն տարիներէ ի վեր: Ան կաղնիի տեսակ մըն է, որուն հասակը կը հասնի 40 մեթրի:

● Հնդկաստանի մէջ կապիկները ամէն տեղերն, նոյնիսկ քաղաքներուն մէջ: Նիւ Տելհի մայրաքաղաքին մէջ հազարաւոր կապիկներ վախ կը պատճառեն կառավարա-



կան շէնքերուն մէջ: Անոնք կը պտըտին շէնքերուն մէջ, ուր կը գողնան ուտելիքներ եւ կը պատուեն կարեւոր փաստաթուղթեր:

● Անգլիոյ հարաւը գտնուող փոքր քաղաքի մը մէջ երիտասարդներ շատ աղմուկ կը յառաջացնէին գիշերը փողոցներուն մէջ: Քաղաքապետարանը որոշում մը կու տայ անոնց սիւսեք բաժնելու, երբ անոնք գիշերը ժամանցի կեղրոններէն դուրս ելնեն: Երբ անոնք իրենց սիւսեքը կ'ուտեն,

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

ՇՈՒՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

մէջ կ'առնեն, կը նշանակէ՝ կը վախնան: Իրենց պոչերը գրեթէ հորիզոնական են եւ մագրեր տնկուած, անոնք յարձակողական դիրք մը բռնած են:

ԵՐԲ ՔԱՆԻ ՄԸ ԾՈՒՆԵՐ ԶԻՐԱՐ ԿԸ ՏԵՄԵՆ, ԻՆՉՈՒՄ ՀԱՋԵՆՈՒ ԿԸ ՍԿԱՐՆ

Հաջոցը միջոցներէն մէկն է, գոր շունը կը գործածէ հաղորդակցելու համար մարդուն կամ ուրիշ շուներու հետ: Ան չի հաջեր միայն այն ատեն, երբ յարձակողական տրամադրութիւններ ունի: Ան իր ձայնին տարբեր աստիճանները կը գործածէ ուրիշ շուներ իրեն հետ խաղալու հրահրելու համար, ուրախութիւնը արտայայտելու, մրցակիցի մը վրայ ազդելու կամ ուրիշ շուներ հաւաքելու համար:

ԻՆՉՈՒՄ ՊՁՏԻԿ ԸՆԻԿՆԵՐԸ ԿՈՅՐ ԵՒ ԽՈՒՆ ԿԸ ՇՆԻՆ

Շնիկները իրենց աչքերը կը բանան 10-14րդ օրուան միջեւ: Իսկ անոնց ախանջներուն խողովակները կը բացուին 13-17րդ օրերուն միջեւ: Սակայն անոնց պարզան հագուադէպ չէ. բոլոր մսակեր անասուններու ձագերը, որոնք պաշտպանուած են ծնողներու կողմէ, կը ծնին կոյր եւ խուլ: Բուսակեր անասունները (ծի, կով, եղնիկ, վագերածի...) լաւ չեն պաշտպանուած իրենց վրայ յարձակող միւս անասուններէն: Հետեւաբար անոնք կը տեսնեն, կը լսեն եւ կը քալեն իրենց ծնած վայրկեանէն իսկ... աւելի լաւ կարենալ պաշտպանուելու համար:

ԻՆՉՈՒՄ ԾՈՒՆԵՐԸ ԿԸ ԼՈՐՉՆՈՏԻՆ

Ուտելու ժամանակ շունը չի ծամեր: Ուտելիքի մեծ կտորները ան կը ծեփէ առատ եւ կ'աչուն լորձուցով մը եւ զանոնք կը կլլէ: Անոր հզօր ստամոքսը կը շարունակէ մարսողութեան աշխատանքը: Իսկ ինչ կը պատահի արտադրուած աւելորդ լորձուցին:


ձայն հանելու առիթը չեն ունենար, եւ քաղաքը աւելի հանդարտ կը դառնայ:

● Քանատայի Ֆրանսական նահանգին՝ Քեպլի մէջ գոյութիւն ունի ձիւնին եւ սառցային մէջ փորուած պանդոկ մը: Ան կրնայ ընդունիլ 22 յաճախորդ: Մեծ թիւով ամբրիկացիներ կը փափաքին փորձել այս տարօրինակ կեցութիւնը: Սակայն արագ պէտք է շարժիլ, որովհետեւ այս պանդոկը իր դռները կը բանայ միայն ձմրան: Քարան ան կը սկսի հալիլ:

● Պրագիլի նոր թղթադրամները նայլընէ են: Անոնք պարզ թղթադրամներէն չորս անգամ աւելի դիմացկուն են եւ կրնան դիւրութեամբ լուացքի մեքենայէն անցնիլ: Սակայն անոնց իսկական առաւելութիւնը այն է, որ շատ աւելի դժուար է զանոնք կեղծելը:

ԳԾԵՆԸ

ԳՈՒՆԱՒՈՐ ՄԱՏԻՏՆԵՐՈՎ




Օդը տակաւին հաճելի է: Հետեւաբար, օգտուէ եւ երկար պտոյտներ կատարէ բնութեան մէջ: Սակայն ճամբայ ելլելէ առաջ, մի մոռնար հետդ առնելու գծագրութեան պզտիկ տետրակ մը եւ գունաւոր մատիտներ:

Ճամբուղ ընթացքին հետքեր հաւաքէ, անոնց վրայ թուղթ մը դնելով եւ վրայէն մուծ գոյն մատիտով մը անցնելով: Այս ձեւով դուն կրնաս ունենալ հետքեր գետնէն, պատերէն, գետին թափած տերեւներէն...




Նստարանի մը վրայ նստէ եւ գծէ շուրջը տեսածներդ ամէնէն բաց գոյն մատիտով: Ապա, գծագրութեանը վրայէն անցիր ամէնէն մուծ գոյն մատիտով: Այս ձեւով դուն ունենի պէտք պիտի չունենաս:




Վերջապէս, ամբողջացուր գծագրութիւնդ միւս գոյները աւելցնելով:

ՓՈՐՁԱՄԵՍ

ՓՈՒՉԻԿԸ




- 1.- Ձգախէժէ փուչիկ մը քաշէ ձեռքերովդ:
- 2.- Շիշ մը ջուրով լեցուր:
- 3.- Ջուրին մէջ աւելցուր մէկ սուրճի դգալ պիքարպոնաք տը սուտ եւ լաւ մը խառնէ:
- 4.- Ջուրին մէջ աւելցուր նաեւ կիտրոնի մը հիւթը եւ... փուչիկը շատ արագ անցուր շիշին բերանը:
- 5.- Ի՞նչ կը պատահի: Փուչիկը անմիջապէս կ'ուռի:




ԻՆՉՈՒՄ

Հարցը շատ պարզ է: Երբ պիքարպոնաք տը սուտ կը խառնես թթու (ասիտ) նիւթի մը հետ (ինչպէս կ'իտրոնը), առանց անդրադառնալու կը ստեղծես ընածխական կազ: Այս կազն է, որ բարձրանալով կ'ուռնցնէ փուչիկը:


Ժ Ա Մ Ա Ն Ց



Որնուար նկարիչին պզտիկ տղան կ'ուզէ խաղալ իր խաղալիք ձիով: Կրնա՞ս օգնել անոր՝ գտնելու համար ձիուն թելը:



Կրնա՞ս օգնել գորտերուն: Անոնք պէտք է երեք ուղիղ գիծ քաշեն իրենց աւագանի մէջ՝ գայն բաժնելու համար 7 մասերու: Իւրաքանչիւր բաժնի մէջ պէտք է գտնուին տերեւ մը եւ գորտ մը:



Կրնա՞ս այս երկաթի կտորները շարել ամենէն մեծէն ամենէն փոքրը:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԳԷՍ / ԶՐՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

ՊԷՅՐՈՒԹ ԶՐՕՍԱՇՐՋԻԿՆԵՐՈՒՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՆԱՅ ՆԵՐԿՈՒԱԾ ՇԵՆՔԵՐՈՎ



Ժամանակին իր ճարտարապետական կառուցներուն գեղեցկութեան համար զբօսաշրջիկներուն կողմէ իբրև Արեւելքի մարգարիտը ճանչցուած Պէյրութի այսօր անոնց կը ներկայանայ իբրև պէթթոնէ կանգուն ժամանակին կառուցներու անտառ մը:

Գ ժ ր ա ի տ ա ր ա ր, անոր ֆիզիքական դիմագիծը աւելի էս վատթարացնողը այն է, որ պէթթոնէ շէնքերուն մեծամասնութիւնը գունաթափած է եւ տասնամեակներէ ի վեր չէ ներկուած: Անշուշտ բացառութիւն կը կազմեն մայրաքաղաքին կարգ մը շրջանները, որոնք վերջին տարիներուն Պէյրութի մէջ ներկուած են աւելի քան հազար շէնքեր: Անոնց մէջ առիծի բաժինը կը գրաւեն Պէյրութի կենդանական շուկաները:

Սակայն շատերու համաձայն, այս շրջանը չի կազմեր Պէյրութի ամբողջութիւնը եւ բաւարար չէ անոր կենսական պահանջները:

ՀՆՈՒՍՏԵՍԻԼ

09:00 - Սապահո	20:30 - Ռուսում մութահարիրա	13:30 - Առողջութեան աշխարհ
12:00 - Շիֆրէ	20:35 - Արաբական ժապաւէն	13:50 - Հեռուստաներկայացում Գէորգ Գէորգեան
12:30 - Երգերու յայտագիր	22:30 - Երգահանդէս	«Դաշտադէմ»
13:00 - Մարտի հասն	ԵՆ. ՊԻ. ԵՆ. 15:00 - Լուրեր	15:00 - Հայրուր
14:00 - Ետրոնիկ	16:00 - Այա մաշարէֆ ալ քարն	15:20 - Մուսֆիլմ «Դէ, սպասիր»
14:30 - Լուրեր	17:00 - Վաւերագրական	15:45 - Ազր TV
15:00 - Մըշուար	17:30 - Սինեմա / 35mm	16:10 - Բարի ախորժակ
17:00 - Պէս սելըր	18:00 - Նօ քունէնթ	16:30 - Երեկոյեան Երեւան
18:30 - Ապու Մըլիէմ	18:45 - Սիահա	16:40 - Խորան լուսոյ
19:30 - Լուրեր	19:00 - Լուրեր	16:50 - Հեռուստատեսային գրատուն (առաջին մաս)
20:00 - Ամերիկեան յայտագիր	20:00 - Մին ալ սապահիա	17:20 - «Շէկ հնքնաթիռ»
21:00 - Լայալի Պէյրութ	20:30 - «Սելեպրիթի»	18:35 - Տուն-տունիկ
00:00 - Պէս սելըր	21:30 - Ուստուն	19:00 - Հայրուր
ԵԼ. ՊԻ. ՍԻ. 07:00 - Սի. Էն. Էն. տիս մորնիկ	22:00 - Այ մասայա	19:50 - Զինուծ
07:30 - Կենդանի գծանկար	23:00 - Գուրաս, իբրիսատ թաքս, Թահիքալ էսուն	20:25 - Երկրի ուժը
8:25 - Տէտէ, պիկ պէյթ	ՆՈՒԹ. ՎԻ. 7:30 - Լուրեր	20:45 - Երաժշտական փոստարկի
09:30 - Մանուկներու յատուկ թատրոն	8:00 - Արթըր	22:00 - Հայրուր
10:30 - Նահաբըմ Սայիտ	08:30 - Մանկական ժապաւէն	22:20 - Երեկոյեան Երեւան
12:30 - Նիլալ էլ պէյթ	10:00 - Լուրեր	22:30 - Խորան Լուսոյ
13:00 - Լուսի սիվիլիզացիոն	10:30 - Սապահ էլ ուարտ	22:40 - Հեռուստատեսային գրատուն (առաջին մաս)
14:00 - Մորէլիա	13:30 - Սուրիական ֆիլմաշար	23:40 - Հեռուստաներկայացում Գէորգ Գէորգեան
15:00 - Յիէշ Ինֆօ	14:30 - Լուրեր	«Դաշտադէմ»
15:15 - Թի թայմ	15:00 - Վաւերագրական	00:15 - Կանանց հեռուստակումբ
16:45 - Պայ	16:30 - Տեղական յայտագիր	01:45 - Տօ, ռէ, մի
17:15 - Ճասք շուք մի պէյթ	17:00 - Էս - Ճայլ	03:00 - Հայրուր
17:45 - Տէտէ, պիկ պէյթ	17:30 - Տեղական յայտագիր	03:45 - Դանի, մի պատմութիւն պատմիր
18:55 - Հէյք սար	19:00 - Էս - Ճայլ	04:00 - Անցեալը ներկան է
19:00 - Մարիա Իգապէլ լուրեր	19:30 - Լուրեր	04:45 - Երեկոյեան Երեւան
20:00 - Արաբերէն յայտագիր	20:30 - Պէս սելըր	04:55 - Հեռուստաներկայացում Գէորգ Գէորգեան
20:35 - Արաբական յայտագիր	21:30 - Ամերիկեան ժապաւէն	«Դաշտադէմ»
23:30 - Ամերիկեան յայտագիր	23:00 - Սըքի	06:00 - Միծաղի տուն
ՄՈՒՍԹԱՔՊԱԼ 7:00 - Լուրեր	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՆՈՒՍՏԵՍՏՈՒԹԻՒՆ 07:00 - Հայրուր	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆՈՒՍՏԵՍՏՈՒԹԻՒՆ 07:20 - Կարճամէթրաժ ֆիլմ «Զախորդ Փանուր»
9:00 - Այամ Ալ Սապահ	07:50 - Միծաղի տուն	07:50 - Միծաղի տուն
12:00 - Խոհանոց	09:00 - «Սիրոյ կախարդանք»	09:45 - Փառաստօս «Մուսք 21րդ դար»
13:00 - Յիէշ Ինֆօ	10:10 - Կարօտ	10:10 - Կարօտ
13:05 - Տորմիլա 1	10:45 - Անցեալը ներկան է	11:10 - Հայերը
15:00 - Լուրեր	11:30 - «Արեւիկ»	11:30 - «Արեւիկ»
15:30 - Էսփաս ֆրանսրֆոն	12:00 - Կանանց հեռուստակումբ	12:00 - Կանանց հեռուստակումբ
17:30 - Ամերիկեան ժապաւէն «Տը փուն տը փոփըր»		
19:00 - Այ ֆաի		
20:00 - Արաբերէն լուրեր		

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրութի սակարանին մէջ օտար դրամացիներու փակման սակագները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթակի	31,40 - 33,50	լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51,00	լ.ն.
Քուէթեան տինար	4953,41 - 4957,42	լ.ն.
Յորդանանեան տինար	2124,41 - 2128,42	լ.ն.
Պահրէյնեան տինար	3995,00 - 4000,00	լ.ն.
Ա. Մ. Էմիրութեան տինար	408,41 - 412,42	լ.ն.
Քաթարեան տինար	412,16 - 416,15	լ.ն.
Սէուտական տինար	399,88 - 403,99	լ.ն.
Օմանեան տինար	3900,00 - 3930,00	լ.ն.
Եգիպտական կինէ	321,71 - 325,72	լ.ն.
Անգլիական սթըրլին	2348,65 - 2352,11	լ.ն.
Զուիցերիական ֆրանք	1005,25 - 1008,52	լ.ն.
Թրքական լիրա	3,61 - 3,64	լ.ն.
Կիպրական փաուստ	2578,10 - 2582,17	լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,55 - 12,59	լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	2450 - 2451	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00	լ.ն.
Քանադական տոլար	953,60 - 957,65	լ.ն.
Աւստրալիական տոլար	829,95 - 832,70	լ.ն.
Եւրօ	1477,90 - 1481,16	լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	115,000 - 125,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	108,500 - 118,500	լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	95,500 - 105,500	լ.ն.
Մերքիքական փէսոս	569,500 - 589,500	լ.ն.

Մէկ քիլոկրամ ձոյ ոսկի 15,000,000 - 15,500,000 Լ.Ն.

Մէկ օնս ոսկի 316,15 - 320,19 \$

Մէկ օնս արծաթ 4,51 - 4,55 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	0.9812
Քանադական տոլար	1.5836
Զուիցերիական ֆրանք	1.4952
Ճափոնական եէն	120.1
Մէկ սթըրլին	1.5612

● ՍՈԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ ԳԻՆԻ Ա. ճշդում ԳԻՆԻ Բ. ճշդում

Ա. կարգի	-	-
Բ. կարգի	4 4/8	4 4/8

Բաժնետերութիւն

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՀԱՅՐ ԳԵՆՐԱԾ ԿՐԴ. ՊԱԼԵՍԿԻ (Ճախկին Արքայր Միջերկրեան Միաբանութեան) վախճանման քառասունըքն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 15 Սեպտեմբեր 2002, Պրոֆայալի Միջերկրեան Վանատան Ա. Յովհաննէս Մկրտիչ մատրան մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՓԱՌՔԷՆ ՊՈՒԼՂՈՒՐՃԵԱՆԻ մահուան քառասունըքն առիթով, յիշատակի պաշտամունք պիտի կատարուի Կիրակի, 15 Սեպտեմբեր 2002, Էշրեֆիէի Հայ Աւետ. եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ին:

ՏԻՆՆԻ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ

★ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ)

Եթէ առեւտրական էք, պիտի կատարէք անցնող եղանակին հաշիւները, որոնք փայլուն եղած են: Պիտի շարունակուի այս յաջողութիւնը:

★ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)

Եթէ սիրելի անձ մը ունիք արտասահման, անկէ պիտի ստանաք նոր լուրեր: Ցանկութիւնը ունիք անոր հետ ձեր ջերմ կապը պահելու:

★ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)

Տնտեսական մարզը դժուարութիւն պիտի ստեղծէ այսօր: Ձեր հաշիւները լաւ ըլլէք: Քանի մը անգամ հաշուեցէք՝ նախքան ծախսելը:

★ **ԽԵՑԳԵՏԻ** (22 Յունիսէն 23 Յուլիս)

Ուշադրութիւն ըրէք, երբ գուարեանալու համար վիճիք ձեր կողակիցին կամ սիրելի ընկերոջ հետ, զայն մի՛ շղայնացնէք: Ձեր «խաղը» կրնայ ժխտական հետեւանք ունենալ:

★ **ԱՌԻԻՄ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Ձեր մուրհակները կամ օրինաւոր տուրքերը եթէ իրենց ժամանակին չէք դասաւորած, այսօր կրնաք դժուարութիւն ունենալ եւ շղայնալ գուր տեղ: «Այսօրուան գործը վաղուան մի՛ ձգէք», կ'ըսէ առածը:

★ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Բացուեցէք դէպի ուրիշները: Այսօր պիտի հանդիպիք արտասովոր եւ զարմացնող անձերու. հարկ է գիտնալ օգտուիլ առիթէն: Արթուն եղէք եւ ընկերային:

★ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Ձեր ընտանիքին հանդէպ եղէք լուրջ եւ հաւատարիմ: Այսօր ձեզի պիտի վստահուի գաղտնիք մը, բայց դուք պիտի քողագործէք զայն անգիտակցաբար: Ձգո՛ւ յշ...

★ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Ձեր ընկերը, բարեկամը կամ կողակիցը մտահոգութիւններ ունի, անտրամադիր է: Շարքավերջին հաղուոր պտոյտ մը կազմակերպեցէք: Ան պիտի մոռնայ իր բոլոր հոգերը:

★ **ԱՂԵՂՆԱԻՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Պիտի հանգիպիք շուկայի անձի մը, որ ձեզի պիտի ծախէ այնքան ապրանք, զոր չէիք որոշած: Պիտի տարուիք պերճախօս մարդոց լեզուէն:

★ **ԱՅԾԵՆՋԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Շատ գովեստներ պիտի լսէք այսօր: Իսկ դուք պիտի չունիք հովանոցի պաշտպանուելու համար: Ձեր տրամադրութիւնը բարձր է այսօր:

★ **ՄՈՎԱՆՈՅ** (21 Յունուարէն 19 Փետրուար)

Երէկ լաւ պատեհութիւնը ունիք սօսելու աղուոր առիթ մը: Այսօր պիտի զգաք այս անփութութեան համար: Ամէն ինչ հարկ է կատարել իր ժամանակին:

★ **ՉՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Այսօր պիտի օգնէք բարեկամի մը, որպէսզի իրագործէ երկար ատենէ ի վեր իր երազած ծրագիրը: Ան բնաւ պիտի չմոռնայ ձեր օժանդակութիւնը եւ քաջալերանքը:

Shams Restaurant
Anjar

In a unique environment of natural beauty, everyone of us is here to serve you the best in Lebanese food

انجاز - بعلبك - لبنان Tel/Fax: 00961 8 620567 / 03 640947-699019

Հարսանեկան Բարբերոյ
Ձմեռ Հարսանեկան

Հարսանեկան Կերպար - Պ. Համուտ
Հեռ.: 01-253008

ԻՆՉ ԿՐԱՆԻ ԿԱՍ ԿՐԱՆԻ
ՓՈԼԻԿԼՕԹ
ԸՈՒՄ ԵՐԶԱՆԱԻՐՏՆԵՐԸ

«... Փօլիկլօթ Բուլճէն մասնակցեցաւ BT3 քննութեան, Լիբանանի մէջ բարձրագոյն սիշը ապահովող առաջին հիւնձին մէջ էի: Ապա յաջողեցաւ նաեւ TS վկայականի քննութեան: Այժմ կ'աշխատիմ որպէս գլխաւոր հաշուապահ ոսկերչական մեծ ընկերութեան մը մէջ, Պուրճ Համուտ...»:

ԹԱԼԻՆ ԴԱՐԻՔԵԱՆ

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5248 Պատրաստեց՝ S.U. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ	ՈՒՐԱՎԱՅԵԱՆ
1. Անվախ, համարձակ:	1. Վայելչութիւն - Աճապարանք:
2. Խնթոնկ - Վայրի արու ոչխար:	2. Ինքնագրութիւն - Յուսկան անկան:
3. Գիւղացի - Կրկնուած ձայնաւորներ:	3. Կլոր բուրգ - Վարպետ:
4. Աղամանգ - Խոպոպիք:	4. Աւազորբար - Կոնարբ ծառատեսակ:
5. Ակաղեմիա - Արական օտար անուն:	5. Հեղուկի ընդունարան - Անդարձագիր:
6. Պտուղի աղուամազ - Իգական օտար անուն:	6. Մարտունիի գիւղերէն - Ինք:
7. Շուշմայի իւղ - Ստացական դերանուն:	7. Բորբոսիլ:
8. Անճանապան եղած օտար երգչուհի:	8. Կրկնուած ձայնաւորներ - Պոլսահայ մեծատուն:
9. Ուշ - Չուարթ:	9. Կնիթ - Դրամ:
10. Ըղձանոյշ - Երկասլի տապար:	10. Նախընծայ - Բայց:

ԹԻՒ 5247

ԽԱՉԲԱՌԻՆ


ԼՈՒԾՈՒՄԸ

1	Մ	Ե	Կ	Ա	Կ	Է	Ս	Ա
2	Ա	Ի	Ա	Ն	Գ	Ջ	Ա	Ա
3	Մ	Ի	Գ	Ա	Ջ	Է	Բ	Ի
4	Բ	Գ	Ի	Մ	Ա	Ջ	Ա	Ա
5	Ի	Ն	Ի	Պ	Ղ	Ա	Ջ	Ք
6	Չ	Ի	Ն	Ա	Ս	Ս	Ա	Ա
7	Հ	Ա	Ս	Ո	Ք	Ս	Ս	Տ
8	Խ	Ա	Ս	Ո	Ք	Ս	Ս	Տ
9	Ի	Ր	Ո	Ւ	Ն	Ե	Ի	Ո
10	Ճ	Ա	Ջ	Ա	Ս	Կ	Է	

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ՎՇԽԱՐՆ



ՖՈՒԹՊՈՒԼ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՀԱՐՈՒՍՏ ՇԱՐՔԱՎԵՐՁԸ

Այսօր կ'աւարտի Եւրոպական ֆուտբոլի ամառային երկար դադարը: Արբանեակային պատկերասփռումներուն եւ նիւթական դժուարութիւններու պատճառով փոքրիկոտ ամառը վերջ կը գտնէ եւ «Քալչիօ»-ի կարուանը կը սկսի քայլել:

Այս շաբաթավերջին պիտի շարունակուի նաեւ Գերմանիոյ, Ֆրանսայի, Անգլիոյ եւ Սպանիոյ ախոյեանութիւնները: Ստորեւ կը ներկայացնենք նշեալ իւրաքանչիւր ազգային ախոյեանութեան ընդհանուր դասաւորումը պատկերը եւ շաբաթավերջի կարեւորագոյն մրցումներու ցանկը:

ԻՏԱԼԻԱ

Ախոյեան Եուվենթոս Ա. հանգրուանի մրցումներուն պիտի հիւրընկալէ Աթալանթան: «Եուվէ»-ի կապը պիտի ունենայ շարք մը բացակայներ, ինչ որ կը նշանակէ, թէ մարտիչ Մարչելո Լիփի նոր դէմքեր պիտի փորձէ:

Ինթեր Միլան, որ անցեալ եղանակի վերջին հանգրուանին տիտղոսը «Չըրիէ»-ը Եուվէի, պիտի մրցի Թորինոյի դէմ, մինչ Ա. Սէ. Միլան, որ իր կապիտէն ներս առած է Ալեանտոր Նետան եւ Ռիվալտոն, պիտի մրցի նոր Ա. դասակարգ բարձրացած Մոտենաչի դէմ:

ԳԵՐՄԱՆԻԱ

Այս շաբաթավերջի 5րդ հանգրուանի մրցումներու նախօրեակին, Գերմանիոյ ազգային ախոյեանութեան ընդհանուր դասաւորման աղիւսակը 10ական կէտով կը գլխաւորեն Պոխումի կապը եւ Պայերն Միւնխիւր: Հանգստացած Ռոսթը եւ Շալքէ ունին յաջող 9 եւ 8 կէտ:

Այս շաբաթավերջին մրցումներէն յատկանշական է Տորթնուտ - Շալքէ եւ Պոխում - Ռոսթը ճակատամարտերը:

ՖՐԱՆՍԱ

6 հանգրուան ետք դասաւորումը կը գլխաւորեն Նիս եւ Օքսէր (13ական կէտ): 11 կէտով վերոնշեալներուն կը հալածեն Լիոն, Ան Ավան Կենկան եւ Պորտո:

Այսօր, Օլիմպիկ Մարսէյ պիտի մրցի Պորտոյի դէմ, մինչ Նանթ իր ուժերը պիտի չափէ Օլիմպիկ Լիոնի հետ:

ՍՊԱՆԻԱ

Ռէալ Մատրիտ պիտի դիմագրաւէ այս տարեշրջանի իր առաջին լուրջ մրցակիցը, երբ այսօր ուղղուի Ռէալ Պէրսիի դաշտը: Հակառակ անոր որ Ռէալէն պիտի բացակայի Ռոնալտոն, որ տակաւին ամբողջովին լաւ մարզավիճակի մէջ չէ, սակայն Ռէալի յարձակողական գիծը կը մնայ հպօր:

Սակայն Պէրսի, որ ամիս մը առաջ բարեկամական մրցումի մը 2-0 արդիւնքով տապալած էր Ռէալը, դիւրին պատահաւ մը պիտի չըլլայ: Յատկանշական է նաեւ Սթրէթիք Պիլպաս - Պարսելոնա այսօրուան ճակատամարտը:

ԱՆԳԼԻԱ

Հինգ հանգրուան ետք Արսենալ 11 կէտով կը գրաւէ Անգլիոյ ախոյեանութեան բարձրագոյն դիրքը: Թորթնուտ ունի 10 կէտ, մինչ Լիօ Եունայթըտ, Լիվըրպոլ եւ Չելսի ունին 9ական միաւոր: Մանչեսթըր Եունայթըտ, որ ունի 8 կէտ, այսօր պիտի ճակատի Զելսիի դէմ:

ՖՈՐՄԻԻԼԱ 1

ՖԵՌԱՐԻ ԿՐՆԱՅ ԼՈՒՐԶ ՄՐՑԱԿՑՈՒԹԵԱՆ ԸԱՆԴԻՊԻԼ

Կ'ԸՍԷ ՄԻՔԱՅԷԼ ՇՈՒՄԱՆԸՐ

Շաբաթավերջին գերմանացի վարորդ Միքայէլ Շումպերը եւ իր իտալական խումբը՝ Ֆենարի, պիտի ուղղուին «տուն», մասկայն կը կարծեն, որ նակցելու համար այս տարուան վերջին եւրոպական կրան փրիին, որ տեղի պիտի ունենայ Մոնպայի մէջ (Իտալիա):

Շումպերը, սակայն, կը հաւատայ, որ Իտալիոյ կրան փրիին Պելճի-քայէն շատ աւելի դժուար պիտի ըլլայ: Ան ըսաւ, որ Ռիլիքմու եւ Մաքլարէն խումբերը պիտի վերադառնան լաւ արդիւնքներ արձանագրելու յոյսով, հետեւաբար Ֆենարիին տուայէ մը սկսելու պիտի ըլլայ:

Ըստ մասնագետներու, Շումպերը գլխաւոր մրցակիցը պիտի ըլլայ անցեալ տարուան տիտղոսակիր՝ Խուան Փապո Մոնթոյան: Ուիլիքմուի քրոնոմիտրի վարորդը անցեալ տարի Սեպտեմբեր 11-ի աղէտէն քանի մը օր ետք կրցած էր տիրանալ իր սպարէտի առաջին տիտղոսին, որ մինչեւ օրս կը շարունակէ մնալ իր միակը: Մոնթոյան, սակայն, շատ ալ խանդավառ չի թուիր Մոնպայով: Ան այս ուղղութեամբ ըսաւ. «Անցեալ տարի Մոնպայի մէջ տիրացալ առաջին բաժակին, բայց այս տարի դրու-

թիւնը տարբեր է: Մոնպայ տակաւին կը մնայ մեր նախասիրած եւ ամենէն յաջող կրան փրիներէն մէկը, սակայն կը կարծեն, որ Ֆենարին պարտութեան մատնելը դժուար պիտի ըլլայ: Պետք է, որ մեր լաւագոյնը տանք այն յոյսով, որ ինքնաշարժները մէկ յուսախաբ չեն ընեն: Մոնպայի կրան փրիին ճոքը ինքնաշարժն է եւ մենք այդ մէկը ունինք, կը կարծեն: Այս բոլորով հանդերձ, սակայն, պետք է իրապաշտ ըլլալ եւ լաւին ձգտիլ առանց անկարելիին յուսալով»:

Անդին Մաքլարէն, որ Ուիլիքմուի գլխաւոր մրցակիցը կը սեպուի, պետք ունի լաւ արդիւնքներ արձանագրելու՝ նկատի ունենալով, որ վերջին քանի մը կրան փրիներէն ետք անոր ինքնաշարժներուն կարողութիւնները հարցման նշանները սկսած են կրել, հետեւաբար կը սպասուի, որ խումբին վարորդները՝ Քոլթարտոն ու Ռայքոնէնը իրենց լաւագոյնը տան եւ լաւ արդիւնքներ արձանագրեն, անշուշտ եթէ ինքնաշարժները չի խանգարուին... Միւս կողմէ, Ռենո խումբին պատասխանատուները յայտնեցին, թէ լաւ արդիւնքներ կը սպասեն՝ նկատի ունենալով, որ

փորձի ժամանակ իրենց կատարած փոփոխութիւնները արդիւնաւետ եղած են:

Ըստ էրեյթին, Ճակուար եւ Թոյոթա պիտի ըլլան այս շաբաթավերջի աուսթրալիաները: Փորձերուն ընթացքին, Փետրո Տը Լա Ռոպա (Ճակուար) երեք անգամ գրաւած էր վերին դիրքերը, իսկ Միքա Սալո եւ Ալան Մաքսիշ (Թոյոթա) եղած էին առաջին հինգին մէջ: Կը սպասուի, որ այս կրան փրիին ըլլալ տար է հետաքրքրական նկատի ունենալով, որ Ֆենարիի ունենալով, որ Ֆենարի կը մրցի իր իսկ երկրին մէջ եւ դժուար թէ խոնարհի այլ խումբի մը առջեւ:

Ար կրան փրիին ամենէն հետաքրքրական մասը կը մնայ «Օրոտրոնո Մոնպայ», որ ինքնաշարժներուն արագութիւնը կը հասնի ժամական 370 քմ.ի եւ որ ինքնաշարժներուն շարժակներն ու արգելակները շատ մեծ վնասներ կը կրեն:

Ինչպէս միշտ, բոլոր լուսարձակները ուղղուած են Միքայէլ Շումպերի վրայ, որ Ալեյ-ճիքայի մէջ արձանագրած էր եղանակի իր 10րդ յաղթանակը (մրցանիշ մը) եւ կը սպասուի, որ Ֆենարիի ծննդավայրին մէջ ալ ան լաւ արդիւնքներ ձեռք բերելով ուրախացնէ իր համակիրները:

ՄԱՔՐԷՅ ԴԷՊԻ ՍԻԹՐՈՒԷՆ

Ռայիի աշխարհի նախկին ախոյեան Քոլին Մաքրէյ վերջերս այցելեց Միթրոնի գործարանը, որպէսզի մտնէ ծանօթանայ խումբին աշխատանքներուն: Ան այս այցելութիւնը կատարեց, երբ իր խումբին՝ Ֆորտի նախագահը՝ Մելքոն Ռիլարն յայտնեց, թէ խումբը կրնայ մօտ ապագային տնտեսական դժուարութիւններու պատճառով ստիպուած ըլլալ ձեռքազատելու իր «աստղերէն» մէկը:

Մաքրէյ յայտարարեց, թէ Ֆորտ տակաւին որեւէ առաջարկ չէ ներկայացուցած իրեն, հետեւաբար որոշեց իր տարբեր խումբերու դիմել: Ան ցարդ կապ հաստատած է Միթրոնի եւ Սուպարու ընկերութիւններուն հետ: Միթրոն, որուն համար 2003ը պիտի ըլլայ Աշխարհի ախոյեանութեան առաջին ամբողջական եղանակը, իր շարքերէն ներս ունի ֆրանսացի Սեպաթիան Լեյպը: Խումբին պատասխանատուները յայտնած են նաեւ, թէ կը փափաքին, որ յայտնի եւ հռչակաւոր վարորդ մը առաջնորդէ յառաջիկայ եղանակի իրենց պայքարը:

Մաքրէյ հարցազրոյցի մը ընթացքին յայտարարեց. «Միթրոնը բաւական լաւ խումբ մըն է: Գործարանին մթնոլորտն ալ բաւական լաւ է: Մտնըր եկած են յաղթելու եւ իրենց ամբողջ ուշադրութիւնը կենդանացած է ինքնաշարժները աւելի եւս արագացնելու վրայ, հետեւաբար անոնց հետ աշխատիլը բաւական հաճելի կը թուի»:

Մաքրէյ հարցազրոյցի մը ընթացքին յայտարարեց. «Միթրոնը բաւական լաւ խումբ մըն է: Գործարանին մթնոլորտն ալ բաւական լաւ է: Մտնըր եկած են յաղթելու եւ իրենց ամբողջ ուշադրութիւնը կենդանացած է ինքնաշարժները աւելի եւս արագացնելու վրայ, հետեւաբար անոնց հետ աշխատիլը բաւական հաճելի կը թուի»:

ՅԵԾԵԼԱՐՇԱԲ. ՄՊԱՆԻՈՅ ՇՐՁԱՎԱՋԲ ԶԻՓՈՂԻՆԻ՝ ԿԵՐՍՏԻՆ ՅԱՂԹԱԿԱՆ

Իտալացի վեթերան հեծելաւոր Մարիո Զիփոլիի 3րդ անգամ ըլլալով շահեցաւ այս տարուան «Վուելթա»-ի հանգրուան մը, երբ երկ 33 վայրկեան 47 երկվայրկեանի մէջ կտրեց 196,8 քիլոմետր տարածութիւնը: Եօթներորդ հանգրուանի այս մրցումներուն գերմանացիներ Էրիք Չապէլ եւ Սվէն Թէօքըն-պրկ յաջողաբար շրջեցին 3րդ հանդիսացան: Նշենք, որ Զիփոլիի 1989ին արհեստավարձ դառնալին ի վեր «Վուելթա»-ի ոչ մէկ հանգրուան շահած էր մինչեւ այս տարի:

ԹԵՆԻՍ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՔՆԵՐ

ԲԱՅԵԼԼԻՔՈՎ, ՔՈՒՐՆԻՔՈՎ ԵՒ ՍԵԼԷՇ Կ'ԱՐՇԱԲԵՆ

ԹԱՇԷԷԼՏԻ ՄՐՑԱՇԱՐՔ
Թաշքէնտի «Փրեպիտըս Բափ» մրցաշարքի կիսաարտականի մրցումներուն Եւգենի Բաֆէլ-նիքով եւ Վլադիմիր Վոլչոկով արձանագրեցին դիւրին յաղթանակներ եւ արտականային պիտի մրցին իրարու դէմ:
Ստորեւ կիսաարտականի արդիւնքները.
Եւգենի Բաֆէլնիքով (Ռուսիա) - ՓարատորԳ Սրիչափաճ (Թայլանտ) 6-2, 6-4
Վլադիմիր Վոլչոկով (Պիլիպին) - Տաիտ Սանկուիճէթի (Իտալիա) 6-3, 6-2

ՇԱՆԿԻՅԱՅԻ ՄՐՑԱՇԱՐՔ

Շանկիայի մէջ տեղի ունեցող թենիսի աղբը-կանց միջազգային քառորդ արտականի մրցումներուն թիւ 4 դասուած Աննա Բոլորնիքով յաղթանակ մը արձանագրեց իր արտականի Բոնաքանիչի վրայ, այսպիսով պահպանելով իր առաջին թենիսի մրցաշարքը շահելու իր յոյսերը: Յաղթանակներ արձանագրեցին նաեւ յաջողաբար մրցաշարքի թիւ 1 եւ 2 դասուած Սմաշնովա եւ Սուկիյամա, մինչ թիւ 3 Քարա Ֆերնանտէշ պարտուեցաւ:
Ստորեւ քառորդ արտականի ամբողջական արդիւնքները.
Աննա Սմաշնովա (Իսրայէլ) - Միքո Սաէթի (Ճափոն) 6-3, 6-2
Մյ Սուկիյամա (Ճափոն) - Ատրիանա Սեբրա Չանէթի (Իտալիա) 6-1, 6-3
Անճէլիք Ռիտմաժա (Իստոնեպիա) - Քարա Ֆերնանտէշ (Արժանթին) 7-6, 6-3
Աննա Բոլորնիքով (Ռուսիա) - Ելենա Բոնաքանիչ (Խրուսթիա) 7-5, 6-4

ՊՐԱԶԻԼԻ ՄՐՑԱՇԱՐՔ

Պրազիլի թենիսի միջազգային մրցաշարքի Բ. հանգրուանի «տեղացի» մրցումներուն Կուսաբ-իո Քուեթըն 6-0 եւ 7-5 արդիւնքով պարտութեան մատնեց ամերիկացի Մաշիսա Ռաշնիկ-թընը, մինչ իր հայրենակիցը՝ Ֆերնանտո Մելի-ճենի 1-6, 6-7 արդիւնքով տեղի տուաւ արձանագրեցի Կասթրոն Էրիսի դիմաց:
Յաղթանակներ արձանագրեցին նաեւ փարակուելից Ռամոն Տելկաթ եւ պրազիլցի Անտրէ Սա: Սոյնպէս Պրազիլի մէջ տեղի ունեցող աղբը-կանց թենիսի մրցաշարքին Մոնիքա Սելէշ, Ելենա Տոթիչ, Անաբասիա Միքիլա եւ Էլենի Տանիլիտո շահեցան քառորդ արտականի իրենց մրցումները:

ՃԱՏՐԱԿ

1
ՍԵՆԵՐԸ ԿԵ ՌԱՂՍԷ
ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ

ԻԿԼԵՍԻՍԱՆ Լ. - ՍԱԼԿԱՍՏՈՒՆ
(2002)

2
ՃԵՐՍԱԿԵՐԸ ԿԵ ՌԱՂՍԷ
ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ

ԳՐԻԳՈՐԵԱՆ Մ. -
ՎԱՏԵԼՍԻՍ Մ.
(2002)

3
ՃԵՐՍԱԿԵՐԸ ԿԵ ՌԱՂՍԷ
ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ

ՊԵՔԸՐ Փ. - ՌՈՒ Լ.
(2002)

4
ՃԵՐՍԱԿԵՐԸ ԿԵ ՌԱՂՍԷ
ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ

ԱՐԹՈՐ ՎԻԼՍՈԹ
(2002)

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սխեմայը պատրաստեց՝ Էլի Հոյիշեան

ԱՉԳ. ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
Հեռ. 01/261622 - 03/268640

Ա. - 2002-2003 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները կը շարունակուին 2 Սեպտեմբեր 2002էն սկսեալ, կէսօրէ առաջ ժամը 8:30էն 12:00, Երկուշաբթիէն՝ Ուրբաթ:

Բ. - Վերաքննութիւններու եւ մուտքի քննութեանց թուականներն են.
Երեքշաբթի, 24/9/2002ին՝ արաբերէն լեզու
Չորեքշաբթի, 25/9/2002ին՝ հայերէն լեզու
Հինգշաբթի, 26/9/2002ին՝ ֆրանսերէն լեզու եւ թուրքերէն:

Գ. - Նորեկ աշակերտներէն կը պահանջուին վիճակագրոյց, ինքնութեան թուղթի լուսպատճէն, երկու լուսանկար, բարի վարուց վկայագիր, աշակերտին պետական թիւը՝ վաւերացուած:

Դ. - Կ'ընդունուին 1 տարեկան եօթը ամսականէն սկսեալ մանուկները:

Ե. - Վերամուտի նախատեսուած թուականներն են.
Չորեքշաբթի, 2 Հոկտեմբեր 2002ին՝ նախակրթարան
Հինգշաբթի, 3 Հոկտեմբեր 2002ին՝ մանկապարտէզ

Զ. - 2002/2003 կրթական տարեշրջանի վարժարանի կրթաթոշակի սակերը մատչելի են եւ սերտուած:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել քարտուղարութեան:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՎԵՐԱՄՈՒՏ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉԱՐԱՊՈՅՆ ՀԻՄՆԱՐԿԻ

Շ.Շ.Շ.Ի 2002-2003 կրթական տարեշրջանի հին թէ նոր ուսանողներու արձանագրութիւնը կը շարունակուի.

- Մինչեւ 16 Սեպտեմբեր՝ Երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 9:00 - 1:00:
- 16 Սեպտեմբերէն սկսեալ՝ ամէն օր (բացի Շաբաթէն), առաւօտեան ժամը 9:00 - 1:00, հիմնարկի գրասենեակէն ներս (Նշան Փալանճեան ձեմարան, Ղոբաք-Էլ-Պլան):

Նորեկները պարտքի իրենց հետ ունենալ.

1. Պետական Բ. պաքալօրեայի, կամ հայկական երկրորդական վարժարանի վկայականի լուսապատճէնը:
2. Վերջին 2 տարիներու ցիւղերը:
3. Անձնաթուղթի լուսապատճէնը:
4. 4 լուսանկար:

Յաւելեալ մանրամասնութեանց համար, կարելի է դիմել.

Հեռաձայն՝ 01 - 375410, 03 - 429685
E-Mail armenianstudies@hotmail.com
* Վերաքննութիւններն ու մուտքի քննութիւնները պիտի կայանան 1 - 3 Հոկտեմբերի առաւօտեան ժամը 10:00 - 12:00:
* Վերամուտ՝ 7 Հոկտեմբեր 2002:

ԾԱՆՕԹ. - Հիմնարկէն ներս ուսումը կը շարունակուի մնալ անվճար:
- Ուսանողներու փոխադրութիւնը ապահովուած է:
- Ունինք գիշերօթիկի բաժին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

